



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

May 1949

10

891.99  
8-38

1002 - 8021

891-99 куз бурик  
2-38 25 бурик

19-3315 22/80

15-7584 21/5-81

ԴԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

# ՀԵՖԻԱՓԵԼԵՐ

ԺՈՂՈՎԱՃՈՒ

ՏԻԳՐԱՆԱՅ ՆԱԽՍԱՐԴԵԱՆՑ

Տասներորդ գիրք

Թիֆլիս

Տպարան Մովսէս Վարդանեանի

1903

310391.99  
4-38

891.99

Հ-38

ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ՀԱՅ

-6 NOV 2017

# Հ Ե Ք Ի Ա Թ Ն Ե Ր

ԺՈՂՈՎԱԺՈՒ

114

ՏԻԳՐԱՆԵՍ ՆԱԽԱՐԴԻԿԵՍ

12  
5  
3  
8  
0  
92

Տաներորդ գիրք



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մովսէս Վարդանեանի

1903

Дозволено Цензурою. 19 Апрѣля 1903 г. Тифлисъ.

## ԽՄՈՐ ՈՒՏՈՂ ԷՐԵԽԵՆ

(Արարատեան բարբառով<sup>1)</sup>)

Ղնում ա չինում մի կնիկ, էս կնիկը ունենում ա  
մի տղայ, մի աղջիկ.—տղին բսենց տասը-տասնըհինգ  
տարեկան, աղջիկն էլ հա ծծի էրեխայ ա ընում:

Օրէն մի օրը էդ կնիկը հաց թխելիս ա ընում:  
Բերում ա էդ ծծի էրեխին օրօրցումը քուն դնում, հն-  
այ իրա բանին կենում: Տղին էլ դէ՝ երայ տղայ, մօրը  
օպտում էր, գունտ էր կրում, ցախ էր բերում թունդիրը  
վառում, մախլասի մօր աղաքին բան էր անում: Էս տղին  
ա՝ մըն էլ որ էժում ա գունտ բերելու, տենում ա ի՞նչ  
—իրանց ծծի էրեխէն հրէն ուսուլով օրօրցիցը վեր  
էկաւ, գնաց խմորի գնտերից մինը կերաւ, էլ եդ գնաց  
մտաւ օրօրցը: Էս որ տենում ա, մնում ա զարմացած  
թէ՝ էրեխէն էլ խմոր կ'ուտի: Դալիս ա մօրը նազ ա-  
նում:

—Մղի, տոնում ա, բա չես ասի՛ ըսենց, ըսենց,

<sup>1)</sup> Արարատեան բարբառով գրած սոյն երկու հէքիաթը  
ժողովուած են Վաղարշապատ գիւղում:

ըսենց բան, մեր էրեխտն օրօրոցիցը վեր էկաւ, խմորի գնտերից մինը կերաւ, էլ եղ գնաց մտաւ օրօրոցը:

— Զէ, ասում ա մէրը, դու էլ ընենց սուտ ևս ասում, որ «էշն ախոռումը կը զռայ».—ծծի էրեխտն էլ գունտ կուտի:

— Զս աւատում, ասում ա տղէն, բնւսուն քաշա, տես գրուտ եմ ասում, թէ չէ:

Սա հա, նա չէ, սա հա, նա չէ, մախլաս ինչ անում ա, չի անում մօրը չի կարում աւատացնի: Տղէն էլի էթում ա գունտ բերելու, էլի տենում ա էն էրեխտն օրօրոցիցը վեր էկաւ, գնաց խմորի գնտերից մինը կերաւ, էլ եղ գնաց մտաւ օրօրոցը: Էլի գալիս ա մօրն ասում, էլի մէրը չի աւատում. հլա տղի վրէն բարկանում էլ ա: Մին, էրկու, հինգ, տասը, քանի տենում ա՝ գալիս ա մօրն ասում ա, համայ մէրը տղին անկաջ չի անում: Էղ տղէն ա, տենում ա որ մէրը իրա ասածը բանի տեղ չի դնում, ինքն իրան միտք ա անում

— Աղպէր, ասում ա, էս ծծի էրեխտն հմիկուց որ խմոր ա ուտում, մենձանայ՝ նլ գիտայ մըզ էլ ուտի. պտի աղաքուց ես իմ գլխի ճարը տենամ:

Էթում ա մի քանի հաց վեր ունում ու եալլայ՝ դանէ դուս. գլուխ ա առնում, անսաս էթում: Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն Աստօծ գիտայ, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի մի շաբաթ, գշեր, ցերեկ գալիս ա՝ մի սարի ա ռաստ գալի: Վարաւորդ ա անում, տենում՝ էղ սարի գօշին հրէնիկ մի սուրու ոչխար. դէս ա մտիկ տալի, դէն ա մտիկ տալի՝ տենում ա ննչ չօբան կայ, մնչ զադ: Մնում ա միտք անելօն, թէ էս ինչ բաս ա, էս սուրու ոչխարը խի՞ ա անտէր, անտիրական ըստէ արածում:—Կայ, չը կայ, ասում ա,

ըստէ մի բան կայ. պտի ընչանք իրիկուն ըստէ կենամ, տենամ էս ոչխարը ուր ա էթում՝ ես էլ հեննէն էթամ: — Մնում ա ընչանք իրիկուն. մութը գետինը կոխում ա թէ չէ, տենում ա հրէս սարը ճզուեց, բաց էլաւ ու էղ սուրու ոչխարը ինքն իրան գնաց, մտաւ մէջը: Տղէն էս որ տենում ա, ինքն էլ ուսուլով ոչխարի հեննայ մննում ա ներսի: Օչխարը որ քօմմայ մննում ա, սարը էլ եղ խփում ա, կախւում:

Էս տղէն մննում ա սարի մէջը ինչ տենում.—լաւ լաւ տներ, լաւ-լաւ օթախներ, լաւ-լաւ ամարաթներ, տնեն, տեղ, գնմ, մարադ, մախլաս՝ ինչ ասես կայ, մի մարդ, մի կնիկ էլ էղ օթախների միջին, որ էրկոսի աշքերն էլ հանած ա, որ ասես զատ չեն տենում: Էղ կը նիկը գուս ա գալի ոչխարի աղարը, բշում, տանում անում գոմը, եննայ մաթրաթը վեր ա ունում, էթում ոչխարը կթում, մաթրաթը պլատէպունդ լրցնում, բերում: Մարդ ու կնիկ էղ մաթրաթ կաթը լաւ, լազաթին փրթում են, գթալներն առնում, ընկնում նրա զանին: Տղէն էս որ տենում ա, ուրախանում, աշխարով մին ա ընում. զաթի ինքն էլ սոված նըխտից ընկիկ էր, — մի դհիցն էլ նա ա վրա պրծնում կաթին: Մարդ ու կնիկ սաղ մաթրաթը գարտիւմ են, չեն կշտանում: Կնիկն էթում ա թաղադան կթում, բերում: Ըս էլ են ուտում, էլի չեն կշտանում: Մնում են արմացած.—աղաք մի մաթրաթ ին ուտում, կշտանում ին, հմի էրկու մաթրաթ կերան, էլի սոված մնացին: Ալրիալը սայմիշ են ընում:

— Կայ, չը կայ, ասում են, ըստէ խանաղդի կայ, որ մեր փայիցն ուտում ա, չենք տենում: Ի՞նս ես, զի՞նս ես, զանավար ես, ասում են, ձի՞ն հանա:

Տղէն էս որ լսում ա, նոր արշայ ա ընկնում, ընդիան ձէն տալի.

—Հողածին եմ, ասում ա, ըսենց, ըսենց, ըսենց է-կել եմ, ընկէ ըստէ. Ասսու սիրուն, ասում ա, մի տեղ տուէք սթար անեմ, կշներիդ մնամ, ես բինեմ ձեզ որդի, դուք ինձ հէրնը-մէր։ Նստում ա մին մին, տեղը տեղին նազ անում իրա գլխով անցկացածը, ոնց որ ես ձեզ նազ արի։

—Լաւ, ասում են էդ բօռերը, զարու ենք։ Դէ որ ըտենց ա, էս ոչխարը քեզ ենք պահ տալի.՝ առաւօտ-ները սարը կը բացովի՝ կը տանես հանդը կ'արածացնես, իրիները էլ եդ կը քշես, կը բերես։ Մեզանից քեզ ա-մանաժ, ասում են, էս սարի վրէն հւր ուզում ես գնա, ինչ ուզում ես արա՛ ձէն, ծպտուն հանող շինի, համայ ֆլան սարը չ'էթաս, ընդէ սատանէք կան, զլուխդ փոր-ձանք կը գայ. հրէս տենում ես՝ մեր աշքերն էլ էն սա-տանէն են հանէ։ Եդ հօ էդ. ֆլան տեղումը, ֆլան սարումն էլ մի ասլան կայ, ընդէ էլ չ'էթաս, թէ չէ աս-լանը քեզ կը քրրի, մենծ թիրէն անկաջդ կը թողայ։

—Աշքիս վրէն, ասում ա տղէն, որ ասում էք՝ չեմ էթայ։

Ես տղէն մնում ա դրանց կշտին.՝ Ասսու իրան օրը առաւօտը գշերով, գշերհանայ վեր էր կենում, ոչ-խարը աղաք անում, սարը բացւում էր. քշում էր հան-դը, արածացնում, իրիկունը որ մութը գետինը կոխում էր էլ եդ քշում էր, բերում տուն։ Ըսենց մին, էրկու, հինգ, տասը, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի մի ամիս, օրէն մի օրը ինքն իրան միտք ա անում։

—Հէրնը-մէրս, ասում ա, ինձ թամբահ են արէ, որ

ֆլան սարը չ'էթամ, ընդէ սատանէք կան, գլուխս փոր-ձանք կը գայ. Ի՞նչ ընում ա բինի, ասում ա, պտի է-թամ, տենամ ընդէ ինչ կայ, ինչ չը կայ։

Ասում ա, ոչխարը քշում դպա էն նարը։ Գալիս ա ինչ տենում.՝ հրէնիկ սատանէքը կիտուել են, մի գե-րանի վրէն զերկուն նստոտէ։ Էս որ տենում ա՝ տղի թուք ու մուքը կպնում ա, քիչ ա մնում լեզաճաք ընի։

—Այ տղայ, ձէն են տալի սատանէքը, արի էս գե-րանը ճղմ։

Տղէն մօտանում ա, տենում սատանէքը ուզում են էդ գերանը ճղմի, համայ չեն կարում։

—Ըտենց ոնց կ'ընի, ասում ա տղէն, սեպ բերէք որ ճղմ։

—Մեզ որդիան ա սեպ, ասում են սատանէքը։

Տղէն բերում ա կացնով տալի, գերանը մխելի տեղ ճղում, եննայ ասում ա.

—Ոք սեպ չ'ունէք, բերէք ձեռներդ դրէք էս գերա-նի արանքը, կացնով տամ, ալրիալը կը ճղուի։

—Լաւ, ասում են սատանէքը։

Բերում են ձեռները դնում գերանի արանքը։ Տղէն կացինը որ չի հանում, քօմմքի ձեռն էլ մնում ա գե-րանի արանքին։ Նոր քաշում ա կացինը էդ սատանէ-թանցը քօմմքին էլ կոտորում, շանսատակ անում, թո-դում. Մէնակ մի չօլախ սատանայ ա պլծնում դրա ձե-ռիցը. էդ սատանէն որ տենում ա ընկերտինքը սատկո-տեցին, զլուխ ա առնում, փախնում. Տղէն կացինը վեր ա ունում, ընկնում դրա եղիկցը, վազում ա, վազում ա, վազում ա՝ հասնում ա էդ սատանին. ուզում ա

կացնով տայ տեղն ու տեղը չըդնամիշ անի, սատկացնի,  
նա աղաշանք, սղաղատանք ա անում.

—Ա՛զպէր, ասում ա, ինձ մի սըպանի, ես էլ քեղ մի  
լաւութիւն կ'անեմ: Քու հօրնը-մօր աշքերը, ասում ա,  
մենք ենք հանէ, հրէս իմ ձեռին ա, ուզում ես տամ,  
թարիլան ինձ ձեռը չը տայ:

—Լաւ, ասում ա աղէն, բէ տու, ձեռը չեմ տայ:

Եդ չօլախ սատանէն ձեռը տանում ա ջէրը, նրա  
հօրնը-մօր աշքերը հանում, տալի նրան:

—Ա՛ռ, ասում ա, էս հօրդ աշքերը, ըս էլ մօրդ  
աշքերը:—Բերում ա տղին մի բմբուլ տալի:—Ա՛ռ, ա-  
սում ա, էս բմբուլը. աշքերը որ կը դնես իրանց տեղը,  
հնայ էս բմբուլը ջրի միջին թաց կ'անես, կը քսես աշ-  
քերին. քսելու բաշտան՝ աշքերը կը լաւանան:

Էս տղէն ա, աշքերը առնում ա, դնում ջէրը, սա-  
տանի հեննայ մնաս բարով անում, վէ կենում ոչխարը  
աղաք անում, քշում: Քշում ա, քշում ա, մուժը որ կո-  
խում ա գետինը, համնում ա էն սարը: Սարը բացւում  
ա, ոչխարը նեքսե ա անում, սարը էլ եդ կանուում ա:  
Եդ մայիֆ մարդ ու կնիկը որ իմանում են տղէն էկաւ,  
ուրախանում, աշխարով մին են ըլնում:

—Հը՛, այ տղայ, ասում են, ըսկի ինչ կայ, ինչ չը  
կայ, մենք բեզանից նիդեարան ինք, հօ էն սարը չը  
դնացիր:

—Ո՞նց չէ, ասում ա տղէն, դնացի, էն սատանէրանց  
հախսիցը էկայ, քօմմրին էլ սատկացրի, ձեր ինադը հանե-  
ցի նրանցից. հրէս էրկսիդ աշքերն էլ բերել եմ:

Բերում ա աշքերը գնում իրանց տեղը, սաղացնում,  
ոնց որ պէտքն ա գրատում, ենիայ հանում ա բմբուլը  
ջրի միջին թաց անում, քսում նրանց աշքերին. քսում ա

թէ չէ, աշքները բացւում ա՝ տենում են:

—Զօրանաս, այ որդի, ասում են, դու որ մեզ էս  
լաւութիւնը արիր, սրա տակիցը մենք ո՞նց պտի գուս  
գանք:

—Նատ մենիծ բան ա, ասում ա տղէն. էսրամ վախտ  
ձեր տանը կենում եմ, ձեր հայն ուտում, ձեր ջուրը  
խմում, —ինչ կ'ըլնի, որ ես էլ մի օր ձեր հաւարին հաս-  
նեմ:

—Այ որդի, ասում են, էս հետ որ անփորձանք էն  
սատանէրանց ձեռիցը պրծար, սաղսալամաթ եղ էկար,  
ըստուց գէնը քեզ մնւղաթ կաց, էն ասլանի սարը չ'է-  
թառ հա, թէ չէ քեզ կը քրրի, ձուիդ ձուիդ կ'անի,  
մենիծ թիրէն անկացդ կը թողայ:

—Լաւ, ասում ա տղէն, որ ասում էր՝ չեմ էթայ:

Հաց են ուտում, պլծնում, թէր են ընկնում ընում:  
Սուաւուրը լիսը բացւում ա, տղէն էլի ոչխարը աղաք ա  
անում, քշում տանում հանդը արածացնելու. Եթում ա,  
էթում ա, էթում ա, շատն ու քիչն Սուտօծ գիտայ,  
ճամփին ինքն իբան միտք ա անում.

—Ինչ կ'ըլնի, կ'ըլնի, ասում ա, արի հմի էլ էթամ  
էն մի սարը, տենամ ընդէ ինչ կայ, ինչ չը կայ:

Սոսում ա, տալի մնուռն անց կենում, ոչխարը  
քշում էն սարը. Եթում ա ինչ տենում—ասլանի ձէնը  
սաղ աշխարքը վեր ա կալէ, ընենց մի ձէն ա հանում,  
ընենց մի ձէն ա հանում, որ Սուտօծ վրկի, աղատի.  
դու մի ասի, էդ ասլանը ցաւում ա: Սալանը էս տղին  
որ տենում ա, ձէն ա տալի.

—Ինս ես, զինս ես, ջանավար ես՝ ձէն հանա, ինձ  
էս նեղ տեղիցը աղատա. հրէս ցաւում եմ, քանի ճուտ  
բերեմ, հալալ կէս անեմ հեննէդ.—էրկուարը ըլնի, մինը

ինձ՝ մինը քեզ, չորսը ըլնի՝ էրկուսը քեզ, էրկուսը ինձ.  
դարուլ ես:

— Դարուլ եմ, ասում ա տղին:

Էթում ա ասլանի աղաքին չօքում, նրան աղատում:  
Էդ ասլանը չորս ճուտ ա բերում: Ասլանը էրկուսը ինքն  
ա վեր ունում, էրկուսը տալի էդ տղին:

— Տար, ասում ա ասլանը, դու որ ինձ էս նեղ  
տեղիցը աղատեցիր, տար, մօրդ կաթի նման քեզ հա-  
լալ ա:

— Էդ տղին ա, ասլանի ճուտերը վեր ա ունում, ոչ-  
խարը աղաք անում, գալի տուն: Սարը ճուտ ա, բաց  
ըլնում, տղին ոչխարը անում ա ներսեւ:

— Հը, հարցնում են էն մարդ ու կնիկը, խի էսքամ  
եղացար:

— Բա չէք ասի, ասում ա, ըսննց, ըսննց, ըսննց  
բան, ֆլան ասլանին աղատեցի, էս էրկու ճուտն էլ  
ինձ փէշքաշ արեց:

Էդ տղին ա, բերում ա ասլանի ճուտերը իրա կը-  
տին պահում: Քանի պուճուր ին, զրանց կաթ ա ուտաց-  
նում, որ մի քիչ մինծանում են, զնջով կապոտում ա,  
որ չը փախնեն: Մնի անումը Ասլան ա դնում, մէկե-  
լինը՝ Ղափլան: Անց ա կենում ըսննց մի քանի վախտ՝  
մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, մախլասի վեց ա-  
միս, օրէն մի օրը էս տղին միտք ա անում.— Էթամ  
մեր երկիրը, ասում ա, տենամ ինչ կայ, ինչ չը կայ,  
մէրս մնց ա, ինչ ա անում, սաղ-սալամաթ ա, թէ չէ:  
— Գալիս ա էդ մարդ ու կնիկայ կուշտը:

— Ուզում եմ էթամ մեր երկիրը, ասում ա, ինչ  
կ'ասէք, իդին կը տաք՝ կ'էթամ, թէ չէ հօ չէ:

— Գնալ գիտաս, այ որդի, ասում են էն մարդ ու

կնիկը, սիրտդ ուզում ա՝ գնա, ինչ պտի ասենք:

— Բաս որ ըտենց ա, ասում ա, կ'էթամ: Ինձանից  
ձեզ ամանաթ, իմ Ասլան, Ղափլանին լաւ մուղաթ կը  
կենաք ընչանք իմ գալը. բան ա, թէ տենաք չարչար-  
ում են, տեղները գինց չեն կենում, ուզում են փախնի՝  
իմաց կացէք նեղ տեղ եմ, բաց թողէք գան, հաւարիս  
հասնեն:

— Լաւ, ասում են էն մարդ ու կնիկը, արխէյին  
կաց, ոնց որ ասեցիր, ընենց էլ կ'անենք:

Էս տղին ա, ճամփի թագարէք ա տենում, եարազ-  
ասպարը կապում, նիլնում ձին՝ եալլայ: Գալիս ա, գա-  
լիս ա, գալիս ա, շատն ու քիչն Սստօծ գիտայ, մի օր,  
էրկու օր, իրեք օր, ճամփի կէսը որ գալիս ա, ըսէ մի  
սարի գլխի մի ջուխտ մում ա վառում, տալի անց կե-  
նում: Գալիս ա, գալի, հասնում ա իրանց երկիրը: Գա-  
լիս ա ինչ տենում,— իրանց երկիրը սադ բրիշակ ա դա-  
ռէ, որ ասես մարդ. մադաթ չը կայ: Էթում ա իրանց  
տունը. ձին դռանը կապում ա, ինքը մննում ներսեւ,  
տենում ա մնչ մէր կայ, մնչ զադ, մնչակ քիրը ընդէ  
նստել ա, աշքերն էլ ճրաքի նման լիս ա տալի: Էս որ  
չի տենում, մնում ա սառած մտիկ անելօն: Քիրը որ  
աղպօրը տենում ա, վազում ա փաթթւում ճտովը:

— Քիրը չարդ տանի, աղպէք ջան, ասում ա, բա-  
րով, հաղար բարին ես էկէ, մնց ես, լաւ ես. Էս մէր  
իր էսքամ վախտ:

— Աղպէքը քեզ մատաղ, ասում ա, վնացել ի պարը-  
րութիւն: հմի էկիլ եմ բեղանից կարօտս առնեմ, էլ վէ  
կենում էթամ:

— Աղպէք ջան, ասում ա, մտով ես էկէ, թէ ձիով:  
— Զիով եմ էկէ, ասում ա:

Քիրը էս որ լսում ա, ալրիալը դուս ա զալի կուռը, տենում ձին ընդէ կապած ա: Վրա ա պրծնում ձիու մի ոտը կուլ տալի: Եննայ զալիս ա հարցնում.

— Աղպէր ջան, իրեք ոննանի ձինվ ես էկէ:

— Հա, ասում ա, իրեք ոննանի ձիով եմ էկէ:

Քիրը դուս ա զալի ձիու մի ոտն էլ ա ուտում, զալի հարցնում.

— Աղպէր ջան, էրկու ոննանի ձինվ ես էկէ:

— Հա, ասում ա, էրկու ոննանի ձիով եմ էկէ:

Քիրը դուս ա զալի ձիու մի ոտն էլ ա ուտում, զալի հարցնում.

— Աղպէր ջան, մի ոննանի ձինվ ես էկէ:

— Հա, ասում ա, մի ոննանի ձիով եմ էկէ:

Քիրը դուս ա զալի ձիու մի ոտն էլ ա կուլ տալի, զալի հարցնում.

— Աղպէր ջան, բու ձին մներ չ'ունէր:

— Հա, ասում ա, չ'ունէր, — փոքսող ա էկէ:

Քիրը էս խօսրի վրէն էթում ա ձին սաղ ուտում, պրծնում, եննայ զալիս ա հարցնում.

— Աղպէր ջան, փիադայ ես էկէ:

— Հա, ասում ա, փիադայ եմ էկէ:

— Աղպէր ջան, բաս որ ըտենց ա, կաց էթամ ձու բերեմ, ձուաձեղ անեմ կէ:

Քիրը թոգում ա դուս զալի: Եդ աղջիկը քօմմրին կերել էր, մէնակ թողէ մի դարրին, որ եր ուզենայ՝ էթայ նրա կուշտր, ատամները սրիլ տայ: Սա որ ոտը դուս ա զում թէ չէ, աղպէրը վեր ա կենում, փախնում. զլխի ա ընկնում, որ պտի զայ իրան էլ ուտի: Մի քիչ մնում ա, քիրը զալիս ա տենում աղպէր չը կայ: Դէս աղպէր, դէն աղպէր, ման ա զալի՛ չի դանում.

դուս ա զալի ընկնում նրա քամակիցը: Աղպէրը վազում ա, քիլը սրա եննուցը: Աղպէրը զալիս ա, զալի, հանում ա էն սարի գլուխը, որդէ մի ջուխտ մում էր վառէ: տենում ա էն մմերը դառել են Ասսու հրամանով էրկու հաստ բարդու ծառ, տենում ա քիչ ա մնում քիրը նրան հասնի, — ալրիալը նիլնում ա մի բարդու գլուխը: Քիրը զալիս ա հասնում աղպօրը: տենում ա աղպէրը նի ա էլէ բարդու գլուխը, բերում ա էդ բարդու քօքը կոծում ա, որ վէ զցի: կոծում ա, կոծում ա, Էնրամ կոծում ա, որ բարդին բարակում ա, քիչ ա մնում վեր ընկնի: Տղէն էս որ տենում ա, իրան զցում ա էն մի բարդու գլուխը: Քիրը զալիս ա էդ բարդու քօքն էլ ա կոծում: Տղէն տենում ա որ քիչ ա մնում էդ բարդին էլ վէ զցի՛ ձէն ա տալի:

— Էջ գլիգի իմ Ասլան, Ղափլան, նրիկ էր՝ համէք, ընենց հուզ տուէք, ընենց կուլ տուէք, որ մի պուտ արին կաթայ:

Ձէն ա տալի թէ չէ, տենում ա հրէնիկ գիղիջը Ասլան, Ղափլանը էկան: Գալու բաշտան վրա են պըրծնում էդ աղջկանը ընենց հուզ տալի, ընենց կուլ տալի, որ մէնակ մի պուտ արին ա կաթում: Կաթալու բաշտան էդ մի պուտ արինը Ասսու հրամանով լիզու էլլաւ, խօսաց: — Աղպէր, ասեց, ինձ վէ կալ կշտիդ պահա, մի նեղ տեղ քեզ պէտքը կը զամ: — Աղպէրը մի պուտ արինը վէ կալաւ, դրեց քթակի ծալը, Ասլան, Ղափլանի հեննայ ընկաւ ճամփայ:

Էկաւ, էկաւ, էկաւ, շատն ու քիչն Աստօծ գիտայ, մի օր, էրկու օր, իրեք օր, ճամփին մի չօբան ուստ էկաւ:

— Բար' աջողում, աղպէր, ասեց չօբանը, էդ ուր  
ես էթում:

— Բարսի, Ասսու հազար բարին, ասեց տղէն. է-  
թում եմ մեր երկիրը.

— Ո՞րի մի բանի վրէն մարշ գանք, ասեց, գտար՝  
էս սուրու ոչխարը ընկ, չը գտար՝ էդ Ասլան, Պափլանը  
ինձ, Ղարուլ ես:

— Ղարուլ եմ, ասեց, արի մարշ գանք:

— Էս շրմու փէտը ընչի՞ ա, հարցրեց չօբանը:

Տղէն միտք արեց, միտք արեց, միտք արեց, շատ  
զլսին զոռ տուեց—չը գտաւ: Են պուտ արինը բժակի  
ծալիցը ձէն տուեց.

— Ճըռը-ճապկի, ճըռը-ճապկի, ճըռը-ճապկի:

— Աղպէր, գտար, ասեց չօբանը, էս սուրու ոչխա-  
րը մօրդ կաթի նման քեզ հալալ ա, տար:

Տղէն էդ սուրու ոչխարը աղաք արեց, քշեց: Էկաւ,  
Էկաւ հասաւ էն սարը: Սարը ճգուեց, բաց էկաւ, տղէն  
ոչխարը քշեց, արեց նիքսն: Էն մարդ ու կնիկը սրան  
որ տեհան, ուրախացան, աշխարով մին էկան: Նոր տղէն  
նստեց ըստէ մին մին նազլ արեց իրա գլխով անցկա-  
ցածը, ոնց որ ես ձեզ նազլ արի:— Ինչ քէֆ, ինչ ու-  
րախութիւն, որ էլ հալ ու հէսար չը կար:

Նրանք հասան իրանց մուրազին, զուք էլ հասնէր  
ձեր մուրազին:



ՈՒՐՇԻ ՀՄԱՐ ՓՈՐ ՓՈՐՈՂԸ ԻՆՔԸ  
ԿՀԵԿԱՆԻ ՄԵՋԸ

(Արարատեան բարբառուի)

Լնում ա չինում մի մարդ: Էս մարդը շատ հա-  
րուստ ա ըլնում.— էլ մալ, էլ զօլվաթ, էլ տաւար, էլ  
ոչխարի սուրու, էլ ձիու իլսիք, ես ինչ զիտամ մեզրի  
փէթակներ, զազացներ, մախլասի էնքամ հարուստ ա  
ըլնում, որ իրանց երկրումը սրան մատով ին շանց տա-  
լի: Էս մարդը աւալ ախըր էրկու տղայ ա ունենում, էր-  
կումն էլ բէղօլվաթ, Ասսու երեսիցը թափած. ոաղ օրը  
պարապ-սարապ ման ին գալի, ըսկի միտք չին անում  
մի բանի, մի գործի կսնեն, մի աշխատանքի տուտ  
բռնեն: Սրանց հէրն էլ ծերացէ, հայ-հայը գնացէ, վայ-  
վայն էր մնացէ: Օրէն մի օրը հիւանդանում ա, տեղով,  
բարձով թէր ընկնում, էլ չի վէ կենում, տղէքանց շարը  
տանում ա:

Տղէքը բերում են իրանց հօրը առօր-փառօր, ոնց  
որ կարգն ա, ժամով, պատարագով թաղում են: Ըսենց  
անց ա կինում մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ,  
էրկու շաբաթ, մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, վեց  
ամիս, մախլասի մի տարի, օրէն մի օրը մենծ աղպէրը  
պուճուր աղպօրն ասում ա.

—Այ աղպէր, հէրիք ա քեզ պահեմ, վէ կաց գնան  
քու բանին, սրանից դէնը ոնց ուզում ես գլուխ պահա:

—Այ աղպէր, ասում ա պուճուր աղպէրը, չէ որ ես  
էլ քու հալալ աղպէրն եմ, մի հօրից, մի մօրից, խի ես  
ինձ զրկում. էսքամ մալ ու գոլվաթիցը, էսքամ հարս-  
տութիւնցը բա ինձ փայ չի հասնի:

—2է, ասում ա, մենծ աղպէրը ես եմ, ինչ կայ  
չը կայ՝ հէրս ինձ ա թողէ, դու ընշացու ես:

—Այ աղպէր, ասում ա, դու արի մի ընի, մի  
անի, չէ ես էլ մեզը եմ, ես էլ քեզ պէս կնկատէր, էրե-  
խատէր եմ:

Համայ մամ ես ասում, մենծ աղպէրը ըսկի չէր էլ  
ուզում անկաջ դնի, աղպօր կուռը բռնեց, զափ-դարդակ  
տանիցը գուս արեց:

Ես պուճուր աղպէրն ա, էթում ա գեղի գլխին մի  
հացատուն բռնում, իրա ճնգլաճուտերը անում մէջը՝ ապ-  
րում. Կնքն էլ էթում ա սրա-նրա կուշը ֆաճութիւն  
անում. հօտաղութիւն անում, օրէնը մի քանի շայի աշ-  
խատում, բերում օղլուշակ պահում. Է՛հ, փառք իրան,  
ըսենց կուչ ու ձիգ անելօն եօլայ էր էթում, համայ  
մենծ աղպօր երեսը չէր էթում.—Սասու ողորմութիւնը  
շատ ա, ասում էր, ամեն մարդի իրա սրտովը կը տայ:

Համայ մենծ աղպօր սիրտը ըս էլ չէր վեր ունում,  
որ իրա աղպէրը շատ թէ քիչ ապրուստ ունի, մի կտոր  
հացի տէր ա, օր աշխատում ա, օր ուտում. հերսիցը  
սիրտը տրաբում էր, չէր իմանում ինչ անի, ոնց անի,  
որ աղպօր զլուխը մի օղիա գայ, մի փորձանրի մէջ  
գցի, որ սիրտը հովանայ:—Արի, ասում ա, աղպօրս  
զրկեմ ֆլան սարի զլուխը, խարեմ թէ ընդէ խազինա  
կայ. որ էթայ՝ էլ էդ չի գայ, ընդէ ջանավարհերի փայ

կ'ընի, կը մնայ, — Օրէն մի օրը վեր ա կենում, գալի  
պուճուր աղպօր տունը:

—Բարով, աղպէր, ասում ա, ոնց ես, լաւ ես:

—Բարով, Ա.սու հազար բարին, ասում ա պու-  
ճուր աղպէրը, կամ էլի, եօլայ եմ էթում:

—Այ աղպէր, ասում ա, ընշանք եթ գու պտի  
ոտենց քեասիր, օրէն հացի մուրացկան մնաս, չէ դու  
էլ ես մեզը, բու օղլուշակն էլ:

—Բա ինչ անեմ, այ աղպէր, ասում ա:

—Որ մի բան ասեմ՝ անկաջ կ'անես:

—Խի շեմ անի, ասում ա, ասա:

—Բա սոր ըտենց ա, մի ջուալ վէ կալ, գնա ֆլան  
սարը, Ընդէ ման կը գաս, մի էր կը գտնես. կը մննես  
էդ էրը, կը տենաս մէջը լիքը նակի, խազինայ, ակն ու մար-  
գարիտ, բալիանտ ու հազար մի ջուռայ թանկագին քարեր.  
վէ կ'ունես, կը բերես, կը հարստանաս, բանի սազ ու  
կենդանի ես, զլուխդ դինջ քեզ հմար գովրան կը  
քշես:

—Ղօրթ, հարցնում ա պուճուր աղպէրը:

—Ղօրթ, ասում ա մենծ աղպէրը:

—Բա սոր ըտենց ա՝ հէնց էդուց ճամփայ կ'ընկնիմ:  
էդ պուճուր աղպէրն ա, առաւօտը լիսանում ա թէ  
չէ, կնկանն ասում ա.

—Ա.յ կնիկ, թէզ արա մի ջուալ թէ, մի քիչ էլ  
հաց թրջա, կամպա գաստախունը:

—Խի, այ մարդ, ինչ կայ, ուր ես էթում, հարց-  
նում ա կնիկը:

—Աղպէրս ասում ա՝ ֆլան սարի կշտին մի էր կայ,  
էդ էրը լիքը ոսկի ա, էթում եմ բերեմ:

—Բախտաւար զլուխդ, ասում ա կնիկը, աղպօրդ

լսեցիր, որ քու ձեռովը բռւ տունը քանդեցիր, Է:

— Դէ շատ մի խօսա, բարկանում ա մարդը, ի՞նչ քու խելքի բանն ա, քեզ ի՞նչ ասում եմ՝ ին արա:

Կնիկը բերում ա մի քանի հաց թրջում, կապում գաստախունը, մի ջուալ էլ բերում, տալի մարդին: Ես պաւճուր աղպէքն ա, գաստախունը գցում ա ջուալի մէջը, վեր ունում, ընկնում ճամփայ: Եթում ա, էթում ա, շատն ու բիչն Ասոծ գիտայ, հասնում ա աղպօր ասած սարը: Տենում ա մի չօլ, եաբանի տեղ, որ ըսկի խսնափոտ չի գալի:— Վայ քու տունը բանդուի, աղպէք, ասում ա, ինձ որդէ զրկեցիր. ինչ անեմ, ինչ զլուխս վայ տամ, հմի շանավարները կը գան, ինձ կ'ուտեն: — Դէս ա ման գալի, գին ա ման գալի, որ մի տեղ գտնի, ընդէ սըթար անիր: Որ շատ ման ա գալի, տենում ա հրէս մի էր, կողքին էլ մի մենծ բար, ընկնց որ էդ բարը տալգայ ա անում էդ էրին: Մնում ա էդ բարի տակը, ջուալը գցում գլխին, կուչ գալի: Անց ա կենում մի սհաթ, էրկու սհաթ, իրեր սհաթ, տենում ա հրէս էկան՝ մի մուկը, մի զէլ, մի աղուէս, մըն էլ մի արջ, էկան մտան էդ էրը, իրար կշտի նստոտեցին: Պուճուր աղպէքը էս շանավարներին որ չի տենում, բիշ ա մնում ահաշոր ընի, լիզաճաք ընի, մնայ:

— Օ՛ֆ, օ՛ֆ, ասում ա մուկը:

— Հը, խի գարտոտեցիր, հարցնում են ընկերուինը:

— Բա ինչ անեմ, ասում ա, իմ բունը մի մենծ, գարտակ տեղ ա. ընիս կշտին մի կարաս ոսկի ա փորած, մարդ էլ չը կայ, որ վեր ունի, տանի. ընձ էլ պէտքը չի, որ ուտեմ եա բանացնեմ, մնացի իմ սոված զկուտակն:

— Է՛հ, ասում ա արջը, էկէք իմ գարտիցը խարար տուէք. ֆլան տեղը մի ծառ կայ, էդ ծառի քօքին մեղը ըի ճանձերը էկել են, բուն գրէ, էնքամ մեղը ածէ, էնքամ մեղը ածէ, որ էլ տեղ ու դադար չը կայ,— էնքամ ա մեղը գիզուէ, կիտուէ, թօփ էլէ, մնացէ: Համայ ինչ անեմ, որ չեմ կարում մօտանայ, էն սհաթը ճանձերը վլա են տալի, կծոտում, գաղգղորիկ ածում:

Ըսենց ջանավարները մին մին գարտամիշ են ըլ-նում: Ես մարդը ըստօնք որ լսում ա, ուրախանում, աշխարտվ մին ա ըլնում: — Եմ խեղճ աղպէքը, ասում ա, ընդուր էր ինձ զրկում ըստէ. հալբաթ նա մի բան գիտար, որ ասում էր, հօ իմ գմւչմանը չէր:

Սուաւօտը բարիլսի հեննայ շանավարները վեր են կենում, էթում իրանց բանին: Եդ մարդն էլ ալուստի վեր ա կենում բախան ծլկում: Եթում ա աղաք մկան առած տեղը: Ման ա գալի, ման ա գալի, մկան բունը գտնում ա: Եթում ա մի տեկան մի բլունգ ա ճարում, բերում մկան բնի կուշտը բանդում: Քանդում ա, բանդում ա, մի էրկու, իրեր արշին բանդում ա, տենում ա՝ ընը, զրուստ որ մի կարաս էրեաց: Կարասի բերանը բաց ա անում ինչ տենում—մէջը լիբը ոսկի: Եերում ա էդ ոսկուցը մի բուռը վիր ա ունում, ածում չէրը, էլ եդ կարասի բերանը զայիմ ծէփում, ֆողը եդ վրա ա տալի, թողում, էթում: Ըսէ մօտիկ մի դեղ ա ըլնում էթում ա էդ զեղը, մի տասը, քսան ֆահլայ բռնում, բաննահ բռնում, խառագ բռնում, մախլասի տուն շինելու հմար ինչ ուստայ սէտքն էր՝ բռնում ա, հենները բարշում, բերում էդ չօլ, եաբանի տեղը:— Ըսէ, ասում ա, ինձ հմար մի ձեռք տուն շինէք:

Ուստէքը բանում են, բանում, մի ամիս, էր-

կու ամիս, իրեք ամիս, վեց ամիս, ըտէ մի ձեռը ընենց տներ են շինում, ընենց տներ են շինում, որ չ'ուտես, չը խմիս՝ հնայ դրան թամաշ անես, ընենց մի սիրունիկ զար էր: Ենայ դրա կշտին էլ մի քանի պաւճուր օթախներ ա շինիլ տալի, մի քանի նօքար բռնում, որ ընդէ կենան, իրա տներին մուզաթ կենան: Ենայ բերում ա մի տասը, քանի փէթակ ա շինիլ տալի, իրա նօքարների հենայ վէ կենում, էն փէթակները վեր ունում, զալի, էն արջի ասած ծառը ման ա զալի, զտնում. տենում ո՛ դրուստ որ էնքամ մեզր ա կիտուէ, էնքամ մեզր ա կիտուէ, որ էլ հէսաք չը կայ: Մեզրը բիրագի հաւարիլ ա տալի, ածիլ տալի ամանները, մեզրի ճանճերն էլ քշում, անում փէթակները, բերում: Բերում ա փէթակները իրա հայաթումը շարսում, մեզրն էլ դնում ա մի օթախ, զուսը շինում: Սնց ա կենում մի քանի վախտ, օրէն մի օրը միտք ա անում էթայ իրանց գեզը: Տները նօքարներին պահ ա տալի, ինքը վէ կենում, ընկնում ճամփայ: Գալիս ա, զալի, շան ու քիչն Աստօծ զիտայ, հասնում ա իրանց գեզը, հասնելու քաշտան դուզ էթում ա աղպօր տունը: — Բա չես ասի, ասում ա, ըսենց, ըսենց քան: — Նստում ա ըստէ մին մին հաղլ անում իրա դիլսով անցկացածը, ոնց որ հս ձեղ հաղլ արի: Մենծ աղպէրը ևս որ լսում ա, մնում ա մաթալ.

— Այ հարայ, ասում ա ինքն իրան, ես աղպօրս զըրկեցի, որ զուրդ ու դի, զանավարների փայ ընի, նա զնացէ, հարստութիւն մալ ու դոլաթ ա դտէ: Բաս որ ըտենց ա, ասում ա, ես էլ կէթամ, բալի հս էլ հմ դտնում:

Ես մենծ աղպէրն ա, առաւօտը սուրբ ծէրի հենայ

վեր ա կենում, կնկանիցը թարուն հաց-մաց կապում, մի ջուալ վեր ունում՝ ընկնում ճամփայ: Եթում ա, էթում, հասնում ա էն սարը: Մննում ա աղպօր ասած տեղը, տափ կինում: Տենում ա իրիկունը էլի էն զանավարներն էկան. էկան մտան էրը, իրար կշտի նստուեցին:

— Ըսկի ինչ կայ, ինչ չը կայ, հարցնում են իրար զանավարները:

— Էլ ինչ պտի ընի, ասում ա մուկը, իմ ընի վրէն էկել են ամարաթներ շնէ, են ոսկիքն էլ քօմմայ հանէ, տարէ, կայ չը կայ, ասում ա, էն օրը ըստէ իսանաորդի ա տափ կացէ, մեր մասլահթին անկաջ ա դրէ:

— Եդ օյինը իմ գլուխն էլ են էկէ, վրա ա բերում արջը, մեզրի թրիչայ չեն թողէ, քօմմայ տարել են:

— Բաս որ ըտենց ա, ասում են աղուէսն ու գէլը, էկէր վէ կենանք ման զանք:

— Էկէր, ասում են մէկեները:

Մենծ աղպէր, ըսօր ես մեռէ թէ էգուց. էս որ լսում ա, զանը մահման դոզ ա ընկնում, դոզմանի գիտնում:

Եդ զանավարները վեր են կենում դէս ընկնում, դէն ընկնում. զալիս են էդ բարի տակը մենում ինչ տենում, — լիք, հրէսիկ մի մարդ ընդէ կուչ ա էկէ, մնացէ: Վրա են պրծնում դրան փալչա փարչա անում, ձուիգ ձուիգ անում, մենծ թիրէն անկաջը թողում: Սրան թողանք ըստէ, զանք խարար տանք պուճուր աղպօրիցը:

Ես պուճուր աղպէրը որ տենում ա մենծ աղպէրը եգացաւ, չէկաւ, ալբիալը զիտի ա ընկնում, որ էն զանավարների ձեռն ա ընկէ, նրա մենծ թիրէն անկաջն են թողէ: Եատ ա դարտ անում, զիտին վայ տալի, համայ էլ ուր, բանը բանից անց էր կացէ: Վեր ա կենում,

Էթում ազգոր տունը, ազգէրանկանը մին մին նազլ ա-  
նում աղպօր գլխով անցկացածը:

— Տեղի ա, ասում ա ազգէրակինը, «ուրշի հմար  
փոր փորով ինքը կ'ընկնի մէջը»:

— Ե՞ն, ազգէրակին, ասում ա, բան չը կայ, ինչ  
էլաւ, էլաւ, դէ տուն ու տեղդ հաւաքա, էն ուրի գլխին  
լու լու ամարաթներ եմ շինէ, Էթանը ընտէ ապրենր:

— Էթանը, ասում ա ազգէրակինը:

Յէրսի օրը վեր են կենում, մէտ տասը սէլ քրէնում,  
այնօյինը բարձում, ընկնում ճամփայ: Գալիս են, գալի,  
շատն ու րիշն Սոտօծ գիտայ, համնում են պուճուր աղ-  
պօր ամարաթը: Զատ-մատելը գալսոտում են, տեղակո-  
րում, օթախները լքցնում, սարրում՝ միջին կենում:

Ուրիշ գարենքից էլ մարդիկ էս որ լսում են, վեր  
են կենում գալի ըտէ տներ շինում, ապրում: Ընկնց որ  
կամաց կամաց ըտէ երայ չէնլիկ ա գառնում:

Ըսինց պուճուր ազգէրը իրա հալալութիւնովը մենծ  
հարսութիւնի, մալ ու գոլփաթի տէր ա դառնում,  
մենծ ազգէրը իրա չկամութիւնովը, խայինութիւնովը  
ջանավարների փայ ըլինում:

Սասանից իրեք խնձոր վեր ընկաւ. — մինն ասողին,  
մինը ասիլ տուղին, մինն էլ անկաջ դնողին.

## ԱՇԻ-ՊԱԼԱՅԻ ՀԵՔԻԱԹԸ

(Խրիմու բարբառու)

Սուսնակով ժամանակով մէկ մ' կար մէկ մ' չիկար  
մէկ հատ ֆխարէ<sup>1)</sup> մարդ կար: Աս մարդը խիստ շատ  
աղջիկ ունի էպիլ է, համայ մէկ հատ օրդի ունեցած չէ:  
Աստուած նարա մէկ հատ օրդի տուվից: Ատ գիշերը  
մէկ հատ զէնլիին<sup>2)</sup> պաղիրկեան<sup>3)</sup> կու գայ նարա տունը  
միստփիր<sup>4)</sup> կ'ըլայ ու լուսու սէմթ պաղիրկեանը գուս  
կ'ելլէ ու զուռին տակը մէկ հատ ծեր մարդ կը տեսնէ:  
Ագ ծեր մարդը կայնիլ է գիր կը գ'ուէ:

— Ի՞նչ կ'անիս, մեծ պապա, կ'ասէ պաղիրկեանը:

— Ի՞նչ անիմ, աս գիշեր աս ֆխարէ մարդուն տունը  
աշքի լուս էզաւ, մանչ զաւակ էզաւ. ևս աս տեղը մի-  
ստափիր պաղիրկեանի բարին ան տղին ճակատը կը  
գրիմ:

Ծանօթ, Խրիմու բարբառով գրած սոյն երկու հէքիաթը  
ստացել ենք պ. Զ. Աւմիկեանցից:

<sup>1)</sup> Խեղճ, <sup>2)</sup> չալուստ, <sup>3)</sup> Վաճառական, <sup>4)</sup> չիւր:

Պազիրկեանը ան սահաթը իմացաւ, որ իրեն բարին  
է տղին ճակատը զրածը, զարձաւ ան մարդուն ասից.

— Ծախէ ինձի քուկդ տղադ, ես քեզի մէկ քիսայ  
օսկի կու տամ:

— Զէ, կ'ասի ան մարդը, ես չիմ տալ իմիս օրդուս:

— Զիլանը թեռազիին<sup>1)</sup> մէկ աչքը օրդուգ տնինը,  
մէկալ աշքը օսկի տնինք, օրդուգ քաշին խատար<sup>2)</sup> քի-  
զի օսկի կու տամ, կ'ասէ պազիրկեանը:

Ագ մարդը միտք արաւ, միտք արաւ, արի տամ,  
ասից, ես Փխարէ մարդ իմ, ինչոս պիտ նայիմ աս  
խատար տուլոցս, Անոկս ալ արաւ: Պազիրկեանը տղին  
բաշից ու նարա տեղը օսկին տուվից ու առաւ տղին,  
ճամբայ էլաւ, գնաց, Գնաց, գնաց, մէկ տազի<sup>3)</sup> քոյ  
տղին տուվից մէկ արապաճիի:

— Տար, ասից, աս տղուն տաղին մէջը մորթէ,  
շապիկը արինով թաթէ ու ինձի պեր:

Արապաճին տարաւ տղին մորթելու, համայ մեղքը-  
ցաւ, տրից տղին ծախին խուլուշիին<sup>4)</sup> մէջը, մէկ հատ  
խուշ<sup>5)</sup> զարկից, տղուն շապիկը նարա ալունով թաթ-  
ից, բերից պազիրկեանին տուվից:

Ագ տաղին մօտիկ ածեր կ'արածէին, ածին մէկը  
տեսաւ տղուն, էկաւ կաթ տուվից: Անկից վերջը ածը  
ամեն օր կու դար կաթ կաւ տար: Այդ ածը մէկ ծեր  
ու Փխարէ կինմարդու ածն էր: Ագ կինմարդը ածին  
կաթը կը ծախէր, անով կ'արպիէր: Ածը երբ որ կցից  
տղին կաթ տալու, կինմարդը չօպանին հարցուց:

— Դնն կը կթիս իմիս ածը:

— Զէ, ես չին կթիմ քուկդ ածդ, ասից չօպանը,

ամեն անզամ հօրսուկու<sup>1)</sup> ատեն քուկդ ածդ կը բաժնվի  
ածերէն ու տաղը կ'էրթայ:

Մէկալում օրը պառաւ կինմարդը էկաւ ածի ետեէն,  
տեսաւ որ հօրսուկու ատեն ածը բաժնըվից վնաց:  
Պառաւը չօպանին հետ պարապար էտեէն զնացին, տե-  
սան որ ծառին խուլուշին մէջը մէկ պղտիկ տղայ պառ-  
կիլ է, ածն ալ նարա կաթ կու տայ: Կինմարդը խնդում  
էղաւ:

— Ես տղայ չ'ունէի, ասից, շինտը<sup>2)</sup> աս տղին ես  
կ'առնում, ածին կաթով կը մեծցունում: — Առաւ տղուն  
իրին տունը տարաւ, տղին անունն ալ «Ո.ծի-Պալայ»  
տրից:

Քանի տարի անցնելէն վերջը ան պազիրկեանը է-  
կաւ Ո.ծի-Պալային կեցած գեղը ու ան պառաւին տունը  
ինցաւ: Պազիրկեանը երբ որ լսից տղին անունը, չէշմիշ  
էղաւ, մնաց:

— Աս ինչ սոյի<sup>3)</sup> անուն է, ասից, ինչու նարա  
Ո.ծի-Պալայ կ'ասիք, չէնէ անուն չ'ունիւ:

— Նո նարա տաղին մէջը գտայ, ասից կինմարդը,  
ածին կաթով մեծցուցի, անոր համար Ո.ծի-Պալայ կ'ա-  
սինք:

Պազիրկեանը ան սահաթը իմացաւ, որ ան իրէն  
թաղլել<sup>4)</sup> տուված տղան է ու ասից:

— Զամենիս, մեծ-մամա, ես իմիս տունս գիր պիտ  
զրիմ, քաւկդ օրդիկդ թող տանէ, անոր տեղը քնզի օսկի  
կու տամ:

Կինմարդը առաջ չ'օպաց խրկիլ, համայ տղան ալ  
— ես կ'երթամ, ասից նէ, — խրկից: Պազիրկեանը զիր

<sup>1)</sup> Կշիռ: <sup>2)</sup> Հափ: <sup>3)</sup> Անտառ: <sup>4)</sup> Խոռոչ: <sup>5)</sup> Թռչուն:

զբից, տուվից տղին. տղան ալ առաւ զնաց: Շատ գնաց չենէ քիչ՝ չի գիտինք, համայ մինչվանք քաղաք հասնելուն յոդնեցաւ. զնաց մէկ չօխռախի<sup>1)</sup> քով նստաւ, ճէպէն պէրսիմէթ<sup>2)</sup> հանից, կերաւ, վերջը պառկեցաւ քուն էղաւ: Ադ չօխռախին տիմացը մեծ տուներ կար, ադ զէնկին պաղիրկեանին տուներն էին: Պաղիրկեանին աղջիկը տեսաւ տղին պառկածը.—Պատպայէս զիր բերած է,—ասից ու ճէպէն թուլխթի կտօրը տեսաւ, զնաց առաւ, տեսաւ, որ իրեն պատպան զրիլ է. «Աս տղան ինչ օր, ինչ սահաթ, ինչ թալսէ<sup>3)</sup>, զայ նէ՝ զարկէք մեռցուցէք»:

Աղջիկը նայեցաւ, մեղքըցաւ տղին. պատուից թուլխթը ու նորը գրից. «Աս տղան ինչ օր, ինչ սահաթ, ինչ թալսէ զայ նէ՝ աղջկանս հետ պսակեցէք»: Վերջը թուլխթը ծալից, ճէպը տրից, էկաւ տուն, մօրը ասից. — իտա տեղը մէկ հատ տղայ պառկիլ է, ճէպն ալ թուլխթ կ'երկնայ, պէրիմ<sup>4)</sup> պատպայէս զիր պէրիլ է, էրթամ հարցունում: Աղջիկը էկաւ, զարթեցուց տղին: Տղան զարթիէն վերջը Ես ձեզի զիր բերի—ասից ու տուվից աղջկանը: Աղջիկը վազից, տարաւ զիրը մամային տուվից: Մաման պացից ու կարդաց. «Աս տղան ինչ օր, ինչ սահաթ, ինչ թալսէ զայ նէ՝ աղջկանս հետ պսակեցէք»:

Կինմարդը ան սահաթը մարդիկ ձան տուվից ու աղջկան պսակից: Պաղիրկեանը մէկ քանի օրէն վերջը պառաւի տունէն վախաւ: Տուն էկաւ, նայեցաւ որ տղան ու աղջիկը առաջ վազեցին. — Բարե էկար, պապա, ասին: Պաղիրկեանը զարմացաւ, կընկամէն հարցուց.

—Աս ինչ բան է, քեզի զրիլ էի, որ դուն նարա մեռցնը, հապա դուն տահա աղջկանս պսակիլ իս:

—Ինքդ անպէս զրիլ էիր ու, ասից կնիկը, կուզիս նէ նայէ, գրած թուլխթդ կեցիլ է:

Պաղիրկեանը կը նայէ, որ «պսակէ» զրիլ է, շինդը միտք կ'անէ որ տղին կորցունէ: —Ես աղջկանս հարսանիրը, կ'ասէ, շինով պիտ տեսնում: —Մէկ հատ նոր խույլի<sup>1)</sup> աղբարի մէջը փորիլ կու տայ: Հարսնիրի ատենը տղին կ'ասէ. —Գնա ինձի նոր խույլիէն ջուր բեր: —Ես բանը ան միտքով կ'ասէ, որ երբ տղան էրթայ նէ ջուր բերելու, մարդիկը նարա խույլին մէջը պիտ ձգէին. պաղիրկեանը սապէս խրատ տուիլ էր մարդոց:

Տղան առաւ վարչերը ջուրի պիտ՝ էրթար: Մէկալ սէմթէն<sup>2)</sup> աղջիկը էլաւ. — Զէրթաս, ասից, քեզի ջուրը պիտ՝ ձգին: — Տղան վար տրից վարչերը, զնաց վախաւ, պողոտվեցաւ<sup>3)</sup>: Պաղիրկեանը պէրլէից, պէրլից<sup>4)</sup>, տղան չ'էկաւ նէ. Սապակոթան լուսու մօտիկ գնաց նայելու: Մարդիկը պաղիրկեանին չի ճանչցան, նարա տարին խույլին մէջ ձգեցին: Պաղիրկեանը անտեղը մեռաւ, նարա բարին ալ ադ տղին էղաւ:

Տղան հասաւ իրեն մուրադին, դուք ալ հասնիր ձեր մուրադին:

<sup>1)</sup> Ջրհոր: <sup>2)</sup> Պաքսիմատ: <sup>3)</sup> Վայրկեան: <sup>4)</sup> Գուցէ:

<sup>1)</sup> Ջրհոր: <sup>2)</sup> Կողմից: <sup>3)</sup> Թագնուեց: <sup>4)</sup> Սպասեց:

ւի սէմթը տարաւ։ Ան տեղը շատ արօտ կար, կովերը կերան, կտացան ու հօրսուկու <sup>1)</sup> մօտիկ գնացին ջուր խմելու՝ ամներն ալ պաթիցան <sup>2)</sup>, մնացին։

Տղան շատ աշխատից նացա հանելու, համայ չի կրցաւ, ինքն ալ գեղը չի դարցաւ, անտեղ մնաց։ Ստ ատենը էկան իրեք հատ տեէ <sup>3)</sup>, իրերին ալ մէջքերուն վրան ֆիշի <sup>4)</sup> կար։ Նաքա իլինքցուցին ֆիշիները ու էկան գնացին։ Իրկուան գեղի մարդիկը ժողոտուեցան, թուվարին կը ոկեզլին <sup>5)</sup>։ Պէրէյեցին, պէրէյեցին՝ չէկաւ, էլան գնացին տեսան, որ կովերը պաթիլ էին։ Նաքա մէկ մէկ հանեցին ու տղի հետն ալ կոխւ արին, — մէկմ տահա <sup>6)</sup> աս տեղը մի բերիլ տէյին։ — Մէկալում օրը թուվարները կէնէ ան տեղը տարաւ, կէնէ պաթեցան, մնացին։ Գեղի մարդիկը էկան հանեցին թուվարները, տղային ալ վարեցին <sup>7)</sup>։

Տղան գնաց նստաւ ան ջուրին քովը։ Տեխները էկան ջուր առնելու ջուր առնելին վերջը էլան պիտ' էրթային։ տղան ալ նստաւ մէկ հատին վրան, էլաւ գնաց։ Տեխները գնացին մտան մէկ տաղը <sup>8)</sup>, անկէ ալ էլան, մէկ տուն կար զիմացները՝ անտեղ մտան։ Տեխները պարպեցին ֆիշիները։ տղան ալ տիէին վրայէն ինչաւ, ներս մտաւ, նայեցաւ որ մէկ մարդ չի կար տունին մէջը, տօլապին մէջը պօղոտուեցաւ <sup>9)</sup>։ Մէյ մ' ալ նայիս ճամը <sup>10)</sup> կոտրուից, իրեք հատ աղմանիք ներս թռան ու իրերն ալ աղջիկ էկան։ Պղտիկ րուրը կնաց տօլապէն բան տանելու, տղան ձեռքէն պռնից, մէկալ աղջիկները

## ՇՈՒՎԱՐՁԻ

(Խրիմու բարբառով)

Անտեհակով ժամանակով մէկ մ' կար, մէկ մ' չի կար մէկ հատ թուվարչի <sup>1)</sup> պապա կար։ Սյու թուվարչի պապան մէկ հատ օրթի ունէր։ Ող թուվարչին ծերացի էր երր մեռաւ նէ, գեղի ամեն մարդիկը ժողոտուեցան ու նաքա օրթուն թուվարչի արին։ թուվարչի արած ատեներն ալ ասին, որ՝ թուվարներն արեելը, արեմուտք ու հիւսիս տար, թէր հարաւ մի տանիլ։ Նա եալ խօսր տուվից անպէս տնելու։

Սոչի օրը նա տարաւ թուվարը արեելը՝ անտեղը արօտ չի կար, ու սազ օրը քաղցած մնացին։ Իրկուանը տուաւ թուվարը, գեղը դարցաւ։ Էրկուսում օրը թուվարը արեմուտք տարաւ։ անտեղ ալ բան չի կար, — քաղցած ու ծարաւ ետ դարցան։ Իրիքում օրն էլ կէնէ <sup>2)</sup>, քաղցած դարցան։ Տղան ինքը իրեն միտք արաւ, — ինչ կ'լայ, որ հարաւ տանիլ նէ։ — Սուաւ չորսում օրը հարա-

<sup>1)</sup> Կոսօրին։ <sup>2)</sup> Խրուեցան։ <sup>3)</sup> Ուզտ։ <sup>4)</sup> Տակառ։ <sup>5)</sup> Սպասել։ <sup>6)</sup> Նորից, այլ հս։ <sup>7)</sup> Արձակեցին։ <sup>8)</sup> Անտառ։ <sup>9)</sup> Թագնուեց։ <sup>10)</sup> Ապակի։

<sup>1)</sup> Նախապապան։ <sup>2)</sup> Պարքեալ։

վախեցան՝ թռան գնացին։ Աղջիկն ու տղան մէկ քանի  
օր մնացին ատ տունին մէջը։ Վերջը տեէին մէկը փիշին  
ման պերից, մէմ ալ տահա ջուրի չի գնաց։ Տղան աղջ-  
կանը հարցուց։

— Ի՞նչի համար նա ջուր չի բերիլ։

— Անոր համար, ասից աղջիկը, որ ասկից վերչը  
դուն ինձի պիտ նայիս, ես բուկուաը <sup>1)</sup> էղայ։ Դուն  
տուն ունիս չենէ չէ։

— Ունիմ, ասից տղան։ արի մեր տունը էրթանը։

Մէկալ օրը տեէներուն վրան նստան, էլան գնացին։  
Տեէները ջուրին քովը թափուեցան, նարա եալ վրային  
ու մինչուան <sup>2)</sup> տղին տունը եաեան գնացին։ Որ ժա-  
մանակ ներս մտան նէ, աղջիկը զարմացած հարցուց։

— Ա՞ս է քուկիդ տունը։

— Հա՛, աս է, ասից տղան։

Տունին մէջը մէկ բան չի կար։ Աղջիկը ասից։

— Դնա մեր տունը, քուրերուս ասա, որ ինձի պըդ-  
տիկ զութին ու թայեախը <sup>3)</sup> լժող խրկին։

Տղան տեէին վրան նստից, գնաց։ Քուրերը առաջ  
վաղեցին ու հարցուցին։

— Բարե էկար, եղնա <sup>4)</sup>). Ի՞նչ կ'անէ քուրերս, ա-  
պէկ է։

— Աղէկ է, ասից տղան, նա ձեզիմէն սպտիկ զու-  
թին ու թայեախը ուզաց։

Աղջիկները ան սահաթը առին ու տուվին զու-  
թին ու թայեախը։ Տղան նացա հետ բարի մնա արաւ,  
տեէին վրան նստաւ, դուն դարցաւ։ Տուն էկաւ, բերածը

<sup>1)</sup> Քոնը։ <sup>2)</sup> Մինչև։ <sup>3)</sup> Զեւնափայտ։ <sup>4)</sup> Փեսայ։

կնկանը տուվից։ Կնիկն ալ առաւ զութիին վրան նըս  
տաւ, թայեախով գետնին գարկից։ Մէկ հատ արար է-  
րեցաւ։

— Ի՞նչ կը հրամայիս, ասից արարը։

— Աս տեղը մինչվանքի վաղը մէկ հատ տուն խոր-  
թէ, ասից կնիկը, անպէս որ թագաւորի տունէն տեսօր  
թնդ ըլայ։

— Աղէկ, ասից արարը ու գնաց։

Մէկալում օրը նացա տունին տեղը մէկ հատ տեսօր  
տուն կար, անցնող դարցողը կը զարմանային։ Վերջը  
կնիկը ասից։ Մենք հարսանիք արած չինք, մարդ ձան  
տնւր։ Էրիկն ալ ձան տուվից գեղի ամեն մարդոց։  
Կնիկը հագնուից նոր հարսին պէս, տունին քօշան <sup>1)</sup>  
կայնից։ Միսաֆիները <sup>2)</sup> կցեցին գալու։ Կնիկը ծերե-  
րուն ձեռքը կը պակնէր, կնճներուն <sup>3)</sup> էրիսը կը թուր-  
նէր։ Կերակուր ուտելէն վիրջը ամենքն ալ գնացին։ ճամ-  
րան մէկ մէկու առին։ Սն տղջիկը թագաւորի վայիլ  
աղջիկ է։

Ադ քանը թագաւորի անկաճը ինկաւ։ Նա իմաս-  
տուններուն ձան տուվից ու ասից։ Ի՞նչ անինք, որ  
իդա <sup>4)</sup> աղջիկը ես առնում։ Իմաստունները միտք ա-  
րին՝ բան չը գտան անելու։ Ենկվերջը թագաւորը ա-  
սից

— Ես քառասուն հազար ասկէր <sup>5)</sup> ունիմ, ամենն  
ալ հիւանդ ին։ նարա ասինք, որ ամեն ասկէրիս խաւող

<sup>1)</sup> Անկիւն։ <sup>2)</sup> Հիւրերը։ <sup>3)</sup> Երիտասարդների։ <sup>4)</sup> Այդ։

<sup>5)</sup> Զինուոր։

թող ուտեցնէ, էկէր չի կընա նէ՝ ան ատեն նարա գլոփը կը կտրինք, աղջիկը ինձի կը մնայ:

Թագաւորի ասածը ամենքն ալ հաւնեցան ու խրկեցին տղին ձան տալու: Տղան էկաւ: Թագաւորը ասից.—Ես բառասուն հազար ասկէր ունիմ, ամենքն ալ հիւանդին, ամենին ալ խաւող պէտք է. էկէր դուն նացա խաւող ուտեցունուս նէ, ան ատենը քեզի բան չի ըլալ, էկէր չ'ուտեցունուս նէ՝ ան ատենը քուկդ գլուխդ կը կտրիմ:

Թուվարչիին օրթին սիրտը կոտրած տուն էկաւ, կնիկը հարցուց.—ինչ ասից թագաւորը տէյին:—Երիկը պատմից թագաւորի ասածը: Ան ատենը կնիկը ասից.—Գնա իմիս քուրերուն ասա, որ քեզի բամբակսվ խաւող թնդ տան:—Մէկալում օրը տեմները էկած ատենը տղան վրան նստաւ, գնաց, Աղջիկները առջնը վագեցին:

—Ի՞նչ կ'անէ քուրերս, հարցուցին:

—Նա առողջ է, ասից տղան, ձեղիմէն բամբակով հաւողը ուզաց:

Նարա հալ տուվին խաւողը: Տղան առաւ, էկաւ տուն ու խաւողը կնկան տուվից: Կնիկն ասից.—Սուազ գեղի մարդոցը ուտեցնունք, վերջը թագաւորի ասկէրներուն կու տաս:—Մարդիքը էկան, աղջիկը կապից խաւողը մէկ փատի ծարին, կըցից<sup>1)</sup> զարնելու, խաւողը կըցից թափելու: Ամենն ալ կերան, կշտացան՝ տահա գիմացներէն աւելցաւ: Վերջը տղան առաւ փատը ու խաւողը ու գնաց թագաւորին ասից.

—Ո՞րտեղն է ասկէրներդ, թնդ գան խաւող ուտելու:

Թագաւորին ասկէրները էկան ժողոտուեցան չեօլին մէջը: Տղան տնկից փատը, ծարին կապից խաւողը ու կցից զարնելու: Անալէս շատ խաւող թափեցաւ, որ ասկէրները կերան, կշտացան ու աղէկ էղան, վարը տահա շատ մնաց: Թագաւորը զարմացաւ, տղին ալ մէկ բան անիլ չը կրցաւ:

Թագաւորը մէմալ տահա խելօքներ թօփ արաւ<sup>2)</sup>, տղին ինչ անին տէյին: Կէնէ իրեն միտքն ինկաւ ու ասից.

—Ես բառասուն հազար ասկէր ունիմ, համայ նացա համար քաղարմայ չ'ոնիմ. ասիմ նարա, որ մէկ հատ բաղարմայ թող խորթէ<sup>3)</sup>:

Թագաւորը ձան տուվից տղին, իրեն միտքը նարան ասից: Տղան կէնէ տուն գնաց, կնկանը պատմից: Կնիկն ասից.—Խասըլէթ<sup>4)</sup> մի անիլ, ևս անոր ճարը կը գըտնիմ:—Բերից թայեախը նարա տուվից ու ասից.—Գնա քաղարմայ խոըթելու տեղը նիստ, զարկ գետնին թայեախով, արաբը կ'ելլէ, ինչ պիտ ասես նէ ասա:—

Տղան առաւ թայեախը, գնաց չեօլին օրթան նըստաւ, զարկից թայեախով զետինին ու արաբը էլաւ:

—Ի՞նչ կ'ուզիս, ասից արաբը:

—Սա տեղը վազը սապակսթան<sup>5)</sup> բառասուն հազար մարդ միկնելու<sup>5)</sup> քաղարմայ խորթէ:

—Աղէկ, ասից արաբը ու գնաց:

Մէկալում օրը թագաւորին տունին դիմացը մեծ բաղարմայ խարթուեցաւ: Թագաւորը զարմացաւ ու ասից.—Մէկ զիշերվան մէջ ինչևս խորթից:—Թագաւորը

<sup>1)</sup> Սկսեց:

<sup>2)</sup> Ջինէ: <sup>3)</sup> Հողս: <sup>4)</sup> Առաւօտեան: <sup>5)</sup> Պարունակելու:

միտք արաւ ու ասից.—Ես նարա անպէս բան ասիմ, որ  
նա հիշ անիլ թող չի կրնայ:—Թագաւորը կէնէ տղին  
ձան տուվից ու ասից.

—Ես քուկդ սլապայիդ սազ վախտը նարա մէկ հատ  
փէս տուվիլ էի, շինաըլս կուղիմ տեսնիլ, գնա թեր:

—Ես ի՞նչէս կը կրնամ բերիլ, ասից տղան. Փէսը  
պապայիս գլուխն էր, նա հալ չօխտան մեռիլ է:

—Խմիս բանս չէ, ասից թագաւորը, էկէր չը բերիս  
նէ գլուխդ ճէլաթ<sup>1)</sup> կ'անիմ:

Տղան տուն էկաւ, կնկանը պատմից: Կնիկն ալ ա-  
սից.—Արթըլս թագաւորին միռնիլը մօտիկ է, գնա ա-  
սա քուրերուն, նարա բեզի կը ցուցնուն:—Տղան գնաց  
ջուրին բովը, տեէներուն էկածը տեսաւ, նստաւ մէկ հա-  
տին վրան ու գնաց: Աղջիկները տիմացը վազեցին:

—Ի՞նչ կ'անէ միր քուըլ, հարցուցին:

—Չեր քուրը առողջ է, ասից տղան, համայ իմ  
պապայիս ֆէսը կ'ուզէ ձեզիմէն:—Քուրերը տղին մէկ  
գուռ ցուցուցին<sup>2)</sup>.

—Գնա, ասին, անտեղէն շիտակ ճամփա կայ, վերջը  
քուկուդ տիմացդ մէկ հատ պալապան<sup>3)</sup> շուն կ'ելլէ.  
դուն նարամէն մի վախնալ, գնա. անկից մէկ հատ պախ-  
չայ կ'ելլիս, — անկից ալ անցիր գնա. անոր բովը մէկ հատ  
պալապան կրակ կայ վառված, քուկդ սլապադ նստիլ է  
աղ կրակին քովը ու կը տաքնայ. նարա գլուխէն կ'առ-  
նիս ֆէսն ու գնացած ճամփէն կը գառնաս:

Տղան գնաց ասած ճամփէն. գտաւ պապային կրա-  
կին քովը նստած կը տաքնար: Տղան պապային պատմից

թագաւորին ուղածը: Պապան հանից գլուխէն ֆէսը, տու-  
վից օրդուն ու ասից.—Տար թագաւորի գլուխը ինքդ  
դիր, դուն ալ մէկ հատ աղէկ ձիկ վրան նիստ փախիր: Տղան  
պապային հետ մնաս բարկ արաւ, դարձաւ էկաւ.  
աղջիկներուն բովը: Վերջը նստաւ տեէին վրան, գնաց  
տուն: Տղան նստաւ աղէկ ձիկ վրան, գնաց թագաւորին:

Թագաւորն սէյիրի էլիլ էր: Նա հեռուէն տեսաւ  
տղուն ու ասից.

— Խմիս ուղած ֆէսը բերիր դայիր:

— Բերի, ասից տղան:

— Տնւր հագնիմ, ասից թագաւորը:

— Ես ինքս կը հագցունում, ասից:

Տղան էկաւ, ֆէսը հագուց գլուխը, ինքը ձիկ վա-  
խաւ: Շատ տեղ էրթալէն վերջը էտե նայիցաւ, տեսաւ,  
որ թագաւորին տունը կրակ ինկիլ է: Տղան էկաւ կնկա-  
նը ասից իրեն տեսածը ու արածը, Մէկալում օրը աղ-  
ջիկը գնաց նստաւ էրված տունին տեղը, թայեախով  
զարկից ու արաբը էլաւ:

— Ի՞նչ կը հրամայիս, ասից արաբը:

— Սա տեղը ինձի թագաւորին վայիլ տուն խորթէ,  
ասից աղջիկը:

Մէկալում օրը ան տեղը թագաւորի տուն խոր-  
թուեցաւ: Թուվարչին օրթին կնկան հետ գնաց ան տե-  
ղը նստաւ:

Նարա հասան իրենց մուրատին, զուր ալ համնիր  
ձեր մուրատին:

<sup>1)</sup> Գլխատել, <sup>2)</sup> Ցոյց տուին: <sup>3)</sup> Ջատ մեծ:

## ԿԻՒԼ ՏԵՇԱԾ ԱԽՃԿԱՆԸ ՀԱՔԵԱԹԸ

(Հարաբաղի բարբառով <sup>1)</sup>)

Իլալ ա չիլալ մին մարթ, մին էլ մին կնէգ։ Ըստ-  
րանց էլ իլալ ա մին տղա, մին էլ մին ծէծ օտող ախ-  
ճիկ։ Մին վախտ հաց թխում ըն իլալ. Էս տղաս էլ  
պիւլէրը օթախիցը տանում ա իլալ, վէր թխին։ Մին  
հետ էլ էս տղաս պիւլը օթախիցը տանելիս վախտը տե-  
սալ ա, վէր իւրան քուրը կոնէն ու վէննէն կապանը  
կերաւ, Վաղ ա տըւալ, հեկալ իւրան մօրն ասալ.

— Սյան, էն պիծի ախճիկը միհէգիս կապաննէն կե-  
րաւ, — Մարն էլ ասալ ա տղէն.

— Վ. ի, աշըքը քուռանա, էն պիծի խօխան կա-  
պանը հանց կ'օտէ,

Մին հետ էլ օթախիցը պիւլէրը տանելիս վախտը

ծանօթ. Սուպէլ Բահաթը եանցի ժողովածուից հրատա-  
րակում ենք Դարաբաղի բարբառով զբած սոյն հէքիաթ-  
ները:

<sup>1)</sup> Տես «Խմոր ուտող էրեխէն» — Սրաբատեան բարբառով  
զբած, որ համարեա նոյն հէքիաթն է:

տեսալ ա՝ լօխ պիւլէրը կերալ ա, հու ըսկսալ ա կալ-  
պիտնէն էլ օտէլ՝ վազ ա տըալ մօրն ասալ.

— Սյան, էն խօխան պիւլէրը կերալ ա, էլ պիւ-  
չի կայ:

Մարը հվատացալ չի։ Էս տղան իւրթիւմն ա կերալ,  
ճաք ճաք ա եկալ, թա եկէր վախչինը, կիկայ մեղ էլ  
կ'օտէ։ Մարը եկալ չի։ Էս տղան ինըը վախսալ ա, թի-  
նացալ։ Էս պիծի ախճիկը եկալ ա մօրը, հացթօխէն,  
խմօր հնցողին կերալ, հու սաղ հացէրն էլ կէրալ։ Եննան  
ընդալ ա սաղ շըհարը լօխ կերալ։ Մինակ մին դամիւր-  
չի, մին բաշմաղչի, մին գարգար, մին դարզի հու մին  
օրիշ փէշակա, հինչ վէր իւրան պէտքն ա եկալ նահան-  
ցից մին-մին պահալ ա:

Էս վախչող տղան բինացալ ա մին սարի կօշտ, ըն-  
տէղ տեսալ ա, վէր էն սարը բիրդան պիցվաւ հու մաշան  
մին սիւրու էծեր տիւս եկէն քինացին ըրածեցին։ Էս  
տղան մնացալ ա մաթ մնացած։ Ընդեղ չուրու իւրիւ-  
գիւնը կացալ ա, տէսալ, վէր էն էծերը կեամ ըն. ինքն  
էլ բինացալ ա սիւրիւէն նհետ ընդալ քինացալ էն սարի  
կօշտը։ Սարը բիրդան ճղվալ ա, հու էն էծերը նիյ ըն  
տեսալ, ինքն էլ նհէտնէն քինացալ ա մաշը հու եննան  
լօխ էծերը վէր նիյ ըն տեսալ, բիրդան սարը դփրվալ ա:  
Եննան էս տղաս քինացալ ա էծերին նհետ տեսալ, վէր  
ընդեղ մին քու կնէգ, մին էլ մին քու մարթ։ Էս տղաս  
վէր տեսալ ա, մին տեղ կեօղու ա կացալ ընդեղան տէ-  
սալ ա, վէր էն մարթն ու կնէգը էծերը կթեցէն կեվա-  
թում, տիրին առաջներէն, հացաւ կէրէն. ինքն էլ քինա-  
ցալ ա ըշտըներին նստալ՝ հաց կերալ. Էս մարթն ու  
կնէգը տէսալ ըն, վէր կաթնը շիւտ կլսեց. մնացալ ըն  
մաթ մնացած։

Մին քանէ օր ստրանց նհետ հաց ա կերպար. ախրը մին գիօնում էս տղան էս մարթին հու կնգանը նհետ հաց օտելիս վախտը, էս տղաս թիբան օզացալ ա թա եր օնէ, բիրդան էս պառաւս ձեռքը թափ ա տըւալ հու էս տղիս ձեռքէն վէր նիյ ա եկալ, բիրդան ծեռքան փոնալ ա: Եննան էս տղիցը հրցրալ ա:—Տու հնւլ ըս: Էն տղան էլ ասալ ա:—Ես մին եթիմ տղա ըմ, եկալ ըմ ըստեղ:—Էս կնէպս էս տղէս ասալ ա:—Հար, մար չ'օնիս, վէր եթիմ ըս:—Էս տղաս էլ իւրան զլսին եկած պէները նազլ ա ըրալ, Ես կնէպն ու մարթը ասալ ըն:—Թա դէ վէր տհենց ա՝ լիաւ ա, գու մեր տղան, մունք էլ քու ծնօղը:—Էս տղան էլ ասալ ա:—Դէ լիաւ ա:—Եննան էս պառաւն ու մարթը ասալ ըն թա:—Ըտեղ մին ծեօր կայ, քինաս վէշ ընտեղ:—Էս տղաս ասալ ա:—Լիաւ ա:—

Մին քանի օր անց ա կացալ, էս տղաս էս ծեօրը տեսալ ա, ասալ ա թա:—Քինամ տեսնամ հինչ կայ, հինչ չի կայ:—Եննան քինացալ ա էն ծեօրաւը, տեսալ վէր էն ա մին տօն կայ: Քինացալ ա դարվագաւը նի մտալ, տեսալ վէր սուտանէրը հրսանէք ըն անում, տւանն էլ մին կերան ըն ճրզօտում. քինացալ ա քշտներէն կազդնալ, տեսալ ա կարում չըն ճղին: Էս կերան ճղօլ սուտանն վէր տեսալ ա էս տղէս, կացէնը տըւալ ա, ասալ՝ թա:—Ինքիալ մին էս կերանս ճղէ, ևս կարում չըմ ճղիմ:—Էս տղաս էլ լինը ա կալալ կացինը: Եննան կացնաւը կերանէն մին հետ թխալ ա, կերանը մին պատառ ճղիմ ա, կացէնը թողալ ա կերանէն մաշին, քինացալ ճղիմ սուտանոցը ասալ:—Եկէք ձեռքնէտ սէպ տըւէք, վէր լոխ սուտանոցը ասալ:—Եկէք ձեռքնէտ սէպ տըւէք, վէր լոխ սուտանէրը եկալ ըն ճօխտ կերանը ճղիմ: Եննան լոխ սուտանէրը եկալ ըն ճօխտ ձեռքնէն տիրալ էն պատառ ճղած տեղը, մինակ աշպազն

ա մնացալ: Աշպազին ասալ ա:—Տու էլ եկ:—Էն աշպազն ասալ ա:—Ես կարալ չըմ, սլէնս թայթիյ ա:—Եննան էս տղաս եկալ ա էն սուտանոցը ասալ, վէր ծեռքնէն տիրալ ըն կերանէն զաթումը, թա՝ ծեռքնէտ պէնդ պէնդ կոխսեցէք հա, վէր կերանը ճղիմ: Սուտանէրըն էլ լոխ պէնդ պէնդ կոխսալ ըն, Եննան էս տղաս կացէնը կերանիցը տիւս ա կալալ, կերանը եկալ ա միւն մինու նիյ եկալ, հու էս սուտանոցը ծեռքնէն մնացալ ա կերանէն զաթումը: Էս սուտանէրը ծվծվացալ ըն թա՝ վայ ձեռքնէս,—էս տղան մտէկ չըրալ, լոխնաց կացնաւ ըսպնօտալ ա: Քինացալ ա թա աշպազէն էլ ըսպանէ, աշպազն ասալ ա:—Ինձ ըսպանել մեր, ես քու հօրը, մօրը աչքերին տեղը կասիմ:—Էս տղան ասալ ա թա՝ դէ ասէ: Էս աշպազն ասալ ա:

—Էն ա էն գոլարումը, քինա եր կալ:—Էս տղան քինացալ ա եր կալալ, աշպազէն ասալ.

—Էս հնւնց անիմ, վէր իմ հօրը, մօրը աշքերը սըղանայ:—Էս աշպազն ասալ ա:

—Էն գոլարումը մին եալուխ կայ, եր կալ, որ աշքերը տինես իւրան տեղը, հու էդ եալուխը վէր քիսես՝ կը սըղանայ:

Եննան էս տղաս սուտանէն էլ ըսպանալ չի, մինակ էն աշքերն ու եալուխը եր ա կալալ, տարալ. աշքերը սաղ սալամաթ աշքեր ըն տեռալ:

Էս տղաս մին հետ մին ծեօրաւ քինալիս վախտը տեսալ ա, վէր մին հանց մեծ ծվֆօց ա կիամ, վէր սասը ասմանն ա եր ինում: Էս սասէն երա քինացալ ա, տեսալ մին ասլան ցաւում ա, վէր հանցու ճօտը պիրի: Էս տղաս վէր տեսալ ա առլանէն՝ վախսալ ա: Էս ասլանն էլ էն տղէն եննան կանչալ ա՝ թա:

— Փախչիլ մէ, եկ: — Ես տղան քինացալ ա կօշտը: Ես ասլանն էլ էս տղէն ասալ ա.

— Տու հինչ ըս: — Ես տղան էլ ասալ ա.

— Ես տատմար ըմ: — Ես ասլանն էլ ասալ ա.

— Դէ տու ինձ երա տատմարօթիւն ըրմ, թա վէր ճտերս տիւս կան, հու ճօխտ ինի՝ մինը քեզ, ամմա թա վէր կընդ ինի, ես քեզ կ'օտիմ: — Ես տղան ասալ ա.

— Հա, լիւտ ա:

Մին պատառ վախտան ետը ասլանէն ճօտերը տիւս ըն կեամ, ամմա կընդ ա ինում: Ես տղաս վէր տեսնում ա կընդ ա, մինը շիւտ եր ա օնում կօխում շալվարը: Ես ասլանն էլ տեսնում չի: Եննան էս ասլանը մտէդ ա անում տեսնում, վէր ճօխտ ա, մինը տամ ա ին տղէն, մէկալը ինքը եր օնում: Ես տղաս ասլանէն էրկու ճօտը տանում ա իւրանց տօն՝ սլրցնում: Մինին անումը Զանգիւ ա տինում, մէկելինը՝ Զիւրանգիւ:

Մին հատ էլ հօրն ու մօրը ասալ ա.

— Ես քինում ըմ իմ առաջվան հօրս ու մօրս երգիրը. այան, ինքիալ էս մուտանան տիր մաննումտ, հու էս էրկու ասլանէն ճօտերը վէր ըստեղան կապալ ըմ, հու մին կեվաթ ճիւր էլ տինում ըմ ըռաշներէն. վէր վախտ վէր էն կեվաթէն ճիւրը պիւրտողի, մուտընէն ակնըն էլ լսրւարվէ, հու ասլաննէն էլ զինջիլը ծիբ-ծիբ անին՝ ասլաննէն ուեց թողեցէր կեան:

Եննան էս տղաս մին ծի ա եր իլալ՝ քինացալ: Հըլըցէն տկողէն ա կուրատալ, մաշը կերալ հու քչէւնէն ջարգիլամա վեր ածալ. եննան էս տկօղնէն թշէներէն ամէն մինը մին մէծ շինարու մշանք ծառեր ա տէռալ, եննան քինացալ ա իւրան կիւլ բիօրը տանը վէր եկալ. Քուրը տիւս ա եկալ ախալօր առաջը՝ ասալ.

— Բազին քըմատաղ, պարով ըս եկալ, եկ օթախումը նստէ:

Ես աղաս քինացալ ա տանը նստալ. Եննան էս տղէն քուրը քինացալ ա ծիյին վիննէն մինը կերալ, եկալ ախալօրն ասալ.

— Բազին քըմատաղ, ծիտ իրէք վէննանի եկաւ:

— Հրամանք ըս, ասալ ա ախալէրը:

Եննան քինացալ ա մին վէնն էլ կերալ, եկալ էլ ասալ.

— Բազին քըմատաղ, ծիտ էրկու վէննանի եկաւ:

— Հրամանք ըս, էլա ասալ ա ախալէրը:

Սէինց քինացալ ա սալ ծին կերալ, եկալ ախալօրն ասալ, ախալէրն էլ ասալ ա՝ հրամանք ըս: Եննան էս տղէն կիւլ քուրը ասալ ա.

— Բազին քըմատաղ, ըտեղ կաց, ես քինամ մեր հրէւանիցը իրէք հաց փօխ օնիմ՝ կեամ:

— Լիւտ ա, ասալ ա ախալէրը:

Ես ախճիկը վէր քինացալ ա, մին վէրցալ եկալ ա, էն տղէն ասալ. — Բալամ, քու քուրը քինացալ ա կուրընէն սրել տայ, կեա քէ օտէ, փախէ քինա: — Ես տղաս էս վէր ըսկացալ ա, փախալ ա, քինացալ: Էն տկօղնը վէր կերալ ա հու ընդեղ տկօղնէ ծառեր ա փսալ. քինացալ ա նահանցից մինը եր իլալ. էս ախճիկը ման ա եկալ էն տղէն հէտան, եկալ ա տէսալ վէր էն տկօղնէ ծառէն երայ: Էս ախճիկը էն ծառը կրծկօրծալ ա, առէ մին մաղ ա մնացալ թա կոտրվէ, էս տղան լօր ա տըւալ, ընգալ էն մին ծառը: Էս ախճիկը էն մինն էլ ա կրծկօրծալ, էլա առի մին մաղ ա մնացալ, էս տղան լօր ա տըւալ, ինգալ էն մին ծառը: Սէինց լօխ ծառը

կրծկօրծալ ա, առէ էն վեռչի ծառն ա մնացալ թա  
կրծկօրծի՝ էս տղաս ասալ ա

— Զանգիւ, Զիւրանգիւ, հիշտեղ վէր ըք, հօփ տվէք,  
կոլ տվէք, մին տօպ արիւն չի կաթի:

Էն սհաթը մօրը մաննէն մուտքնէն ակնը խաւար-  
վալ ա հու ասլանէն քշտին ճիւրը պիւրտողվալ: Էս  
տղէն հարն ու մարը ասլաններէն պեց ըն թօղալ, էն  
սհաթը եկալ ըն հսալ էն տղէն կօշտը: Էս տղան Զան-  
գիւ, Զիւրանգուին ասալ ա.— հօփ արւէք, կոլ տըւէք՝  
մին տօպ արիւն չի կաթի:— Էս ախճիդը ըղաչանք ա  
ըրալ, տղան մտէգ չի ըրալ, հրամայալ ա, վէր օտին:  
Էս ասլաննէն հօփ ըն տըւալ, կոլ տըւալ, ամա մին  
տօպ արիւն ա կաթալ մին տիրեւու երայ: Էս տղաս  
վէր ա եկալ արիւնը տիրեւումը պտատալ, կօխալ փա-  
փախէն դաթը:

Եննան ասլաննէն մին հղըցաւ տանելիս վախտը մին  
քարվան ա պատահալ: Էս քարվանէն տարը եկալ ա էս  
տղիցս հրցրալ.

— Ա՛ տղա, քեզ մին պէն հրցնիմ, թա վէր զիդացէք՝  
էս սազ քարվանս բիզ. ամմա թա վէր գիտաս վէչ՝ էդ  
էրկու ասլանէն ճօտերը ինձ:

Էս տղաս էլ հաւան ա կացալ, Եննան էս մարթս  
հրցրալ ա.

— Ծեռքինս հինչ փադ ա:


Էս տղաս էլ աշխարքումս հինչ ծառու անում տ  
իլալ՝ լօխ ասալ ա, — ճապկի ծառն ա մնացալ թա ասէ.  
Էն էլ մննան ընկալ ա: Եննան էս քարվանէն տարը էս  
էրկու ասլանէն ճօտերը ինք ա կալալ, քինացալ մին խի-  
լա անդ: Էն սհաթէն մի տօպ արիւնը բիրդան փափա-

խիցը տիւս ա եկալ, ծէտ տեռալ, քինացալ ծառէն հ.  
ըայ կազնալ, ասալ.

— Ճապկի ճպատ թպղլի, ճապկի ճպատ թպղլի:

Էս տղան էս վէր ըսկացալ ա, վազ ա տըւալ բար-  
վանէն տէրուչը կօշտը, ասալ:— էդ փատը ճապկի ճպատ  
թպղլի ա:— Էն բարվանէն տարը ասալ ա.— Հա, գիղա-  
ցիր:— Եննան էս տղաս էն մարթին հինչու ապրանք ա  
իլալ, լօխ եր ա կալալ, ասլանէն ճօտերը ետ առալ, եր  
կացալ ընկալ հղէ: Եկալ ա, եկալ, հասալ ա իւրանց  
սարը: Հարը, մարը սրան վէր տեսալ ըն, ուրախացալ,  
ըշխարքաւ. մին ըն իլալ:

Ըստուծանս իրեք խնձեօր վէր ընգնէ:— մինը ըսո-  
վէն, մինը լսովէն, մինն էլ չը լսովէն:



ԱՉՔԸ ՎԱՀՐԸ ԿԱԼԱԺԵՆ, ԿԱՂԱՔԻՆ ՀՈՒ ՔՕ-  
ՍԱԿԵՆ ՀԱՔԵԱԹԸ

(Ղարաբաղի բարբառով)

Իւալ ա չիւալ մին աշքը վահրը կալած, մին կաղ-  
էգ, մին էլ մին քոսակ: Ես իրեքանիս մին տեղ զօնալ  
ըն կանչալ. իրեքանին էլ բինացալ ըն, միւն միւնիւ քշտէ  
նստոտալ:

Ես աշքը վահրը կալածէն աշքը շատ վահրն ա կա-  
լալ, հմանչալ ա թա սրփի. կաղէգն էլ վէր ծլըպատակ  
նստալ ա, վէննը օպալ ա մեկնէ, հըմանչալ ա. քոսակէն  
կլօխն էլ քօր ա եկալ՝ էլհա հմանչալ ա թա քօրէ: Ախ-  
րը վէր ճարընէն կտրալ ա, աշքը վահրը կալածը մին  
ծեռքը մեկնալ ա, մինաւն էլ աշքը սրփալ, հու ասալ.

—Իմ հօրս մին թըւանդ օնար, վէր թուշ ի օնում,  
հաւին սոչըտակաւն ար կենում:

Կաղէգն էլ վէննը մեկնալ ա հու ասալ.

—Բա իմ հարն էլ իմ պիծի վախտս մին չաքմա  
ար առալ ինձ հետէ, կեցէ՛ նի չի մտաւ, կեցէ՛ նի չի  
մտաւ ախրը վէր մին պէնդ ծիր տըւէ՛ նի մտաւ:

Են քոսակն էլ կլօխը քօրելաւ ասալ ա.

—Աղա, հէնչ շատ սօտ ըք ասում:

## ՂԱՍԱԲ - ՕՂԼԻ

(Լօբու բարբառով)

Էլէլ ա չի էլէլ՝ մի թըգաւորը շատ  
շէն ա էլէլ, մե-մինձ ըմարաթնի ու ջըլիդ շատ երգըրնի  
ա ունեցել. հըմա էն ա որ խեղճը անորդի ա ըլում: Ա-  
լամ ըշխալքումը ինչ որ գիտուննի ու կըրացնի կան,  
ինչ որ ջինդար ու փալքացնի կան՝ չիմնու կուշտն էլ  
մարդ ա զըրկում, չիմնուն էլ բերիլ ա տալի, որ մի ճար  
անեն՝ իրան մի զաւակ ըլի, հըմա բան չի զառնում:

Ես խաբարը մի շատ իմաստուն դարվըշի անգամն  
ա ընդնում. ինքը զորթ ա ջըլիդ ըշխարըի մէկէլ ծէրումն  
ա ըլում, հըմա չունքի իրանից ումուգ ա ունենըմ, վեր ա  
կենըմ ու ճամփա ընդնըմ: Ե՞՛ գնում ա, գնում—չըել մի  
տարին՝ տեղ ա հասնըմ:

Թըգաւորին իմաց են տալի թէ՛ «մի դարվիշ ա ե-  
կել, քու տիսութիւնն ա ուզում»:

Ծանօթ. Մեծ. պլ. Ան՛նհօսիսն ԱԲՈՎԵԱՆԻՑ ստացել ենք  
սոյն հէքիաթը, որ նա գրել է Օձուն գիւղում՝ բուն տեղական  
բարբառով:

Դարվիշը հէ որ թըգաւորի ըմալաթնին ա մտնում հա, զըլիզգան ըըշկում ա ու աշքերը մթնըմ են էն զարդ ու զըրդարանքիցն ու ալ ու ալվան սլլալոցիցը:

— Դարվիշ բարա, ասա տենում ինչ խնդիրը ունիս, հարցնում ա թըգաւորը:

— Թըգաւորն ապրած կենայ, ասըմ ա, ես իմացել եմ, որ քի որդի չի ըլում, եկել իմ որ էնթավուր մի զիր անեմ, որ տարէն վրա Ասծով քի մի զօչ տղա ըլի:

— Դարվիշ բարա, ասաւ, ըշխարումս էլ գիտուն ու դարվիշ չը մնաց, էլ ջինզար ու փալբաց չը մնաց, մժա հըվաքեցի. հըմա մինն էլա բան չի բըշարեցին:

— Թըգաւորն ապրած կենայ, ասըմ ա, թող ես զիր անեմ, ըժու թէ որ մի տարէն վրա քի որդի չըլի, իմ զլուխը տնւ:

— Թէ լաւ, ասաւ թըգաւորը, որ ըթէնց ա, զիր արա, ես զլուխ կտրիլը գիղեմ ոչ. թէ որ խօսքդ զրուստ դուս եկաւ, իմ խազընիցը քաշովդ մին ոսկի կ'տամ.— Բերեց իրան ճամփու խարջուուն էլ տփուց:

— Թըգաւորն ապրած կենայ, դարվիշն ասաւ, ես քիանէ ոսկի չեմ ուզըմ, հըմա մուննաթ եմ անըմ, որ եփ 'րէխին ըլի հա, թոգուս կնքաւորը ես ըլիմ: Թըգաւորը միտք արաւ միտք ու թէ՝ «դէ լաւ, ասաւ, թող ըթէնց ըլի:» Դարվիշը գիրն արաւ, ոնց որ կարգն էր՝ ամեն բանի թամբանն արաւ ու գնաց իր ճամփէն:

Տարին թըմամեց, դարվշի խօսքը գրստուեց, — Թըգաւորին մի լաւ սիրուն տղա էլաւ: Ել ինչ ասեմ, էն ուրախութիւնն արին, որ անասելի, անպատմելի: Հըմա թըգաւորը ի խոստմունքը կըտարեց ոչ. 'րէխին կնքիլ տվուց. «ո՞ւ լիտի, ասաւ, հմի դարվիշը մեռած ա թէ սաղ: Ըժու թամբան արաւ, որ 'րէխին մի դուռն ու

կտուրը փագած օթալի մէջ պըհեն չըէլ մենձանալը. չունքի վախէր, որ չըլի թէ դարվիշը գայ ու տենու:

Ո՛վ տարով կը մենձանայ, էդ 'րէխին օրով էր մենձանում. ով օրով կը մենձանայ՝ նա սըհաթով էր մենձանում:

Մի վախտ էլ բիրդան դարվշի միտն ընկաւ էդ բանը. «արի, ասաւ, գնամ տենում ոնց ա էլէլ» ու ճամփա ընկաւ, եկաւ հասաւ էս թըգաւորի ըմարաթնին: Արի դու հմի գրանց տես, որ ջըլիդ չլուլը էլան թէ՝ «ըսկի 'րէխայ չի էլէլ, թէ՝ բու գիրը սուտ զուրս եկաւ ու փլան փստան»: Դարվիշը դորիթ ա նրանց խօսքերին ըւատաց ոչ, հըմա ըոլի խօսաց էլ ոչ:

Նրան նստացըրին որ հաց ուտի:

Դու Ասծու բանը ընդի տես, որ թըգաւորի տղի կըցարանը դարվշի նստած տեղի դիմացումն էր ու հէ էդ սըհաթին նրա հըմար էլ ին բաժին տարել, որ հաց ուտի: Թարսի պէս, դարվշի ահիցը, տղի մէրը ընհէնց շնկուել էր, որ բաժնի միջին մի ոսկու էր թողել, չունըի ամեն հետ նրա բաժնի մսի ոսկոռնին զոգում էր: Էս տղէն միսը որ կերաւ հա, ոսկոռը կրծեց կրծեց, տեհաւ ծամվում չի, ջիգրն եկաւ՝ շարտեց փանջարովը տուեց: Փանջարէն շըըխկալէն եղ բաց էլաւ ու արկի շողբը տուն ընկաւ: Թըգաւորի տղէն հըսկացաւ ոչ թէ էն ինչ բան ա, շատ ըրմացաւ ու տեղիցը վիկացաւ արկի շողբի հետ կոխ բռնեց, որ սաքի թէ տանիցը դուս անի:

Հըմա փանջարի թըխկոցի ձէնը դարվշի անդան ընկաւ. նա տեղիցը վիկացաւ, փանջարովը մտիկ տվուց տեհաւ, որ թըգաւորի տղէն արկի շողբի հետ կոխ տունում. էն սըհաթնեւթ զլիսի ընկաւ, որ թըգաւորը իրան խափել ա:

Դարպեցի ջիգրը շատ եկաւ. թըգաւորի տղին մտիկ  
արաւ մտիկ ու մի գէշ անիծք ասաւ. — Ի՞նչ անեմ, ասաւ,  
այ տղա, բալքա դուն Դունեա-Գեօղալի բալքալէրին  
գաս. — Ես ասաւ ու իմաստ-վուսէն հըգաքեց՝ գնաց:

Մը խէլի վախտից եղը թըգաւորի կնիզը զնաց իր  
տղին ակը տալու, տուն մտաւ ի՞նչ տեհաւ, որ տղին ա-  
րիի շողքի հետ էնդրդամ կոխւսն ա տուել, որ քափ-  
քրդնը մտել ա:

— Եդ ի՞նչ ա քու հալը, բալք ջան, ընչի ես ըթէնց  
քրդնել:

— Բա էս ի՞նչ ա, որ տուն ա մտել, կարում չեմ  
դուս անեմ:

— Այ որդի, էդ ի՞նչ դուս անելու բան ա, որ ա-  
սըմ ես, էդ խում արեի շողքն ա: — Տղին վլխի չի ընպաւ:

Ըժու մէրը կենդ-կենդ պատմեց թէ. — Ախըր, այ  
որդի, լիս-աշխաը կայ, երգինք կայ, արե ու լուսնիակ  
կան, մարդիկ կան ու ամեն բան հըսկացրուց. Տղին հէ<sup>1</sup>  
ըստոնք իմացաւ թէ չէ, ասաւ. — գէ, մէրք ջան, ինձ դուս  
տարէք տենում ի՞նչ թաւուր ա էդ աշխարքը: — Մէրը  
չուզեց, որ տղի սիրտը կոտրի համ էլ դարվիշը զնացել  
պըծել էր, տանը պըճելու էլ ի՞նչ մըհանա կար, վիկա-  
լաւ ու դուս բերուց:

Տղին որ դուս չեկաւ լիս աշխարք ու չորսի կռանը  
մտիկ տվուց, խելքի ծէրը կուլ գնաց:

Մտիկ տվուց իր հօր ըմարաթնուն, քաղքի սիրուն  
սիրուն տներին, զրայնէրի կանաչ գօշաւոր զարդու զա-  
միշ սարերին, մէրինու շիմշատ-շիմշատ ծառերին, զրանց  
ստեղծօղ Սածուն ու զըլիկ ըրմացաւ ու քիվն եկաւ: Ասաւ.

— Ես ուզըմ եմ քաղքիցը դուս զնամ մը քիչ  
ման գամ, որ գնա սիրտս բաց ըլի: Էն սհաթնեւէթ,

թըգաւորը իր թալիմ տուած հրեղէն ձին թամրիլ տվուց  
ու տղին նստացրուց, որ գնայ ման գայ:

Տղին ձին նիրլաւ, տասը գումնամէկը քշեց ու եղ  
եկաւ. մին էլ քշեց ու էլի եղ եկաւ. վրա իրեքն էլ որ  
քշեց հա, մըրիշ աւել գնաց ու հետն ու հետը աղաք  
քշելով՝ շատ հեռացաւ ու էն գնալն էր ինչ գնաց: Դար-  
վըշի անիծքը քար արաւ:

Թըգաւորն ու կնիզը էնդգամ ճամփա պըհեցին, որ  
աշքները ջուր կտրեց. — Եկաւ ոչ, Եկաւ ոչ: Զօշուն դուս  
արին, սար ու ձոր, քօլ ու չօլ ման ածին, հըմա ի՞նչ  
խօսք ա, հրեղէն ձիու եղնուց լսկի կըհասնուէր. — Թը-  
գաւորի տղի իզն ու թոզն էլ չի ՚րեաց:

Հմի գանը թըգաւորի տղի կուշաբ:

Սա վրա իրեք հետն էլ որ ձին քշեց, շատ դիր ե-  
կաւ, սիրտն ուզեց որ մըրիշ էլ աղաք զնաց ու ըթէնց  
զնալով-զնալով՝ ջըլիղ հեռացաւ. «Գնամ, ասաւ, դլուխս  
բաղա տամ ու դարվըշի ասած Դունեա-Գեօղալին զըդ-  
նում»:

Գնաց, զնաց, էլ շատն ու քիշը Սստոծ գիդի, չքէլ  
հասաւ մի զօրգու տեղ. որ կանաչ խոտը մարդարոյ  
կանգնած էր. ընդեղ ձիուցը վերեկաւ, որ համ մըրիշ  
դինչանան, համ էլ ձին ըրածի:

Օրը սարի թէ էն ա համ մընաժոռել էր:

Էիրդան քիր, որդեան որ էր՝ մի մարդ բուլըմիշ  
էլաւ թըգաւորի տղի լզաքին: Էդ մարդը սախն դրած  
մի թօփուղաւոր երկաթէ չոմբախ ունէր, որ ծէրը հարիր  
փութ կ'էր, կօթը քառսուն: Թըգաւորի տղի թուք ու  
մուքը սառաւ:

— Բարի՛ ՚րիգուն, ախպէր, ասաւ երկաթէ չոմբա-

խաւորը, ինչ մարդ ես դու, ասաւ, որ էս զօրովզը լրածայրնըմ ես:

—Ե՞ն, ճամփորդ մարդ եմ, ինչ անեմ, ախալէր ջան, ձիս սոված էր, ասի՞ մըրիչ ըրածայնեմ ու գնամ ճամփէս, Ասծու խաթեր՝ բաշխի:

—Եղ շատ բարի, ասաւ, հըմա ոնց որ տեհնըմ եմ՝ իւամ մարդ ես, արի ինձ ասա քո ով ըլիլը, ըու բանի անումը. ետ էս ա մթնել ա, բշերս նրտեղ պտիս կենալ: Թըրգաւորի տղէն մըխելի շշկուելու արաւ ու ինքն էլ հարցրուց թէ. «քա գնն ով ես, ախալէրացն, հարցնիլն ամօթ չըլի»:

—Ես էս հանդերի զօրըզին եմ, ասաւ ու ինձ էլ Հասար-օղլի են ասըմ:

—Ես էլ էն փլան թըրգաւորի որդին եմ, ասաւ ու Գունեա-Գեօղալը իմ բաւթէն ա, ինչ ըլի-ըլի՝ ես նրան գդնուլ պտեմ:—Հասար-օղլին մատը կծեց, էն սհաթը զլիի ընդաւ, որ սրան անընել են ու մեղքը շատ եկաւ. նա լաւ զիտէր, որ թըրգաւորի տղէն Գունեա-Գեօղալին գդնողը չի ու զլուխն էլ մի օղբաթի կ'առայ:

—Դէ որ ըթենց ա, ասաւ, արի ես ու զուն ախալէրաննը ու ես էլ հետգ կ'գամ, չրէլ որ քի քու մուրազին հասցնեմ:

—Նատ բարի, ասաւ թըրգաւորի տղէն, ու իրար ձեռը տուին, պլոշտի արին, Ասծու ըղարին ուխտ գրին, որ մշվանց իրանց մահը հալալ ախալէր ըլին. Ըժու Հասար-օղլին ասաւ. «ախալէր ջան, ես մի ջադուքեար պլուաւի տեղ զիդեմ, արի գնանք նրա կուշտը. —թէ ասաւ՝ նա մեզ կասի Գունեա-Գեօղալի տեղը, թէ չի ուրիշ ոչով չի զիդենալ:

Սրանք վիկացան ճամփա ընդան. Թըրգաւորի տղէն

ձիով էր, Հասար-օղլին ոտով, հըմա հինց եղին գնէր էն հարիր ու քասսուն փթանոց թօփուզն ուսին, որ թըրգաւորի տղի հրեղէն ձին եղնէն հասնէր ոչ. Մախլասի շատ գնացին թէ քիչ, էկ Աստոծ զիդի, գնացին հասան ջադուքեար պլուաւի տունը, որ մի վերանա չօլում մէն. մենակ կենում էր:

«Բարի ՚րիգուն քի, նանի», ասին ու կազնեցին: Զափուքեար պլուաւը ըռանց «Ասծու բարին» ասելու, «ինչ մարդիկ էր, ասաւ, որ էս հէս բշերին եկել էր. ես տեղ չունիմ, ասաւ, գնացէր ձեր բանը». Էս սառը ջուղարը որ իմացան հա, Հասար-օղլին ուզեց, որ մի մըհանով իր հունարը շանց տայ ու թէ «դէ լաւ, ասաւ, նեղանալ մի, հրէս գնում ենք, հըմա նանի, նանի, հրէդ ծնկանդ վրա մի լու կայ»: Էս ասաւ ու մթա թէ ուզեց, որ թօփուզի ծէրովլը լուն շանց տայ. Հլէ որ թօփուզի ծէրը դրեց պլուաւիս ծնկան վրա, պլուաւը շրէլ կէսը կետնումը մէր մտաւ. ըժու եղ հանեց ու դըրա գուռն ըդու էլաւ: Պառաւը տեհաւ որ չէ, հաքես սրանք հայդա հույզա մարդիկ չեն, համ էլ վախսեց թէ չիմ իրան սպանեն—մթա թէ սկի բանի խարար չէր, վիկացաւ ու սրանց թէ «այ որդիք, բարով, հըզար բարի էր եկել աղբաթիսէրեր, էս չախին նոր էր գնըմ, էս մի բշերն ըստի կացէր, ըժու Աստոծ ձիղ հետ», Նրանք մհացին:

—Նանի, ասաւ Հասար-օղլին, մենք քու կուշան ենք եկել ու մի մուննաթ ունինք, հըմա կըտարիլ պլուաւի:

—Սըրիս վրա, բալա ջան, ասաւ, ասա տեհնում էդ ինչ բան ա:

—Գունեա-Գեօղալի տեղը մեզ ասիլ պտես, նանի ջան, չունքի էս իմ ախալօր բութէն ա. սրա խաթեր գլուխս բադա պտեմ տալ ու գդնուլ:

— է՛, է՛, է՛ լաբօլ դժար բան ա, որպի, էլլըհէ ջըհել վախտս էր էլէլ՝ կիմանէի, հըմա հմի կարալ չեմ:

— Ել գէս գէն չ'կայ, նանի, ոնց որիսա պտես իմանալ ու մեզ սըփորացնիլ: Պառաւը մըքիշ միտք արաւ միտք ու թէ՝ «դէ լաւ, ասաւ, ընեցէր չքէլ բարի լիսը բաց ըլի, ըուաւողը կասեմ:

Ըուաւողը որ վիկացան, երեսներըն լուացին, աղօթք արին պրծան, պառաւն տոսաւ.

— Չրէս էս ճամփէն կրոնէք՝ կ'երթաք, կ'երթաք չըէլը որ մի մենձ մէրի ոաստ կ'գայ. էդ մէրումը մի անվերի-վերի տեղ մի մենձ ըմարաթ կայ, Գունեա-Գհօղալը էդ ըմարաթի միջին ա. օխտը ուշաք ախպէր ունի, նրանք օխտը օթախս մին մնի վրա փագած ջըլիզ ծէրի օթախտումն են պլինում Գունեա-Գհօղալին: Հմի Ս.ստոծ ձեղ հետ ու ձեր մեղրը ձեր չինրը: Պըռաւին չնորհակալութին արին, Ասծու անըմը տուին ու ճամփու ընդպան:

Քանի օր, քանի չափաթ, թէ քանի ամիս ճամփագնացին՝ էդ Ս.ստոծ դիդի, շքելը մի ՚րիգու հասան պըռաւի ասած մէրու միջի Գունեա-Գհօղալի ուշաք ախպօրտանց ըմարաթնուն: Ըմարաթ եմ ասըմ, որ սաղ ըշխարքումը ինչպղամ թըղաւորնի կան, չիմնու ըմարաթնուցն էլ լաւը:

Տանը ոչտվ չ'կար, ուշաբնին ֆորսատեին ին, Գունեա-Գհօղալն էլ զաթի օխտը օթախսի միջին փագած էր: Գուանը օխտը օջաղ կար վառած, ամին օջաղի վրա մի մենձ ընպնաւոր պղինձ դրած կոկարենքնու վրա. էդ պղինձնու միջին էլ՝ մնումը սաղ-սաղ գոմէշ, մնումը եզը, մնումը ոչխար ու ջուռա-ջուռա ֆորսի մսեր՝ խլթլսլթալէ եփում ին:

Ղասաբ-օղլին ու իր ախպէրը ըմարաթնու պատի տակին թագ կացան մշվանց տենուն թէ ինչ ա ըլում: չինց որ լաւ զըրանլուին ընզաւ հա, մին էլ էն տեհան՝ հրէս օխտը ուշաք ախպէրտինքն էլ եկան սպանուած ֆորսերը ուսներին. մընի շըլակին սաղ պախրա, մընի շըլակին վէրու վարագ ու ջուռա-ջուռա ֆորսի մսեր: Եալակինին վիրածին ու սոված գիշանու պէս վրա էլան պղինձնուն: Հըմա էն սըհաթը ֆոտովի իմացան, որ իսանի ոտ ա մտել իրանց ֆողը. իրար հարցըրին ու եղ սուս կացան, չունքի ասին՝ ով սիրու կանի իրանց օլքէն ոտ կոխի:

Խէլի վախտից եղը Ղասաբ-օղլին ախպօրը թողուց տեղն ու ինքը վիկացաւ ուսուլով աղաք գնաց դըրա ու շաբնին. Թօփուղը զրադին վեդրուց, ջիլիզդան մօդացաւ, «բարի ՚րիգուն», ասաւ ու ոնց որ ինքն էլ նրանց ախպէրն ըլի, զամի տակիցը զըմալթին հանեց, իրեց մի պղնձի միջի սաղ-սաղ դրած կոմչի մէջն ու դուս քաշեց դրուց ըզարին, կցեց թլաշիլն ու անոշ անիլը: Ուշարնին ջըլիզ ըրմացան նրա սրտոտութենիցը. իրար ըրմսի մտիկ ին անում ու դլինին պարտում: Մին ու զում ին, որ վաշ ընդնեն թիքա-թիքա անեն Ղասաբ-օղլուն, մին էլ մտրնումը ասում ին. «թնդ մը քիչ հեռայ, ըժու մենք զիգենք»:

Ղասաբ-օղլին որ տեհաւ սրանիր հացիցը եղ դառան ու իրան խեթը—խեթն են անըմ հա, ասաւ. «այ ուշաք ախպէրտինք, ես ոնց որ տեհըմ եմ՝ ձեր չիդրը ինձ վրա շատ ա զալի, դէ որ ըթէնց ո՛ վիտու ինձ տուէր ես զնամ»:

Սրանք էն սըհաթին իրանց պուճուր չօլախ գե ախպօրը հրամայեցին, որ վիտն իրան տայ: Գեր ման եկաւ

ման՝ վէտը զդաւ ոչ։ Ըժու Ղասաբ-օղլին մատով նշանց տվաց։ գեր մօղացաւ ի՞նչ տեհաւ, որ մի հրշամաթ երկաթէ թօփուղ ա, չալիշ եկաւ չալիշ ու ըսկի կարաց ոչ թէ մի թիքա էլ ա ժաժ տայ։ Ուշաբնին տեհան, որ շատ ա ըլրչարվըմ կենդ-կենդ վիկենալով, վիկենալով՝ չիմն էլ վրա ընգան էդ թօփուղի վրա ու նոր-նոր կոթը գեղենիցը բըցրացըն ու եդ վեգեցին։ Ըժու ջանըմսան Ղասաբ-օղլի, աելիցը ծուլ էլաւ, վրա թռաւ թէ՝ «ի՞նչ կայ ըստի, տնաշէննի, որ ըթէնց տանջվըմ էր» որ մի ձեռովի բըցրացընց ոչ, էս քու ուշաբնու թուրը սառաւ։

Տեհան որ չէ, հաքենաս սա ուրիշ ջուռա մարդ ա, թէ բանը էն տեղը հասցնեն, օխտին էլ կը կտորի, փափկեցին ու թէ։

— Էս չախին մոր ես գնըմ, այ ախպէր, համեցէք ևս քեր մեր կշտին զոնախ կաց, զօնախը Ս.սժունն ա ու էրուց գվօրը որ կուզես, Ս.ստոծ րի հետ. հրլա մենք էլ կտանենք մեր մնուրը անցկըկացնենք։

— Ես հէ ձեր կուշտն եմ եկել, Ղասաբ-օղլին ասաւ, ու մի մուննաթ ունեմ, մախսուզ պտէք կըտարիւ։

— Ի՞նչ մուննաթ ա, ասին, հրամանք արա տենունք, թէ մեր ձեռիցը զալու բան ա, աշբներուս վրա, խի չենք կըտարիւ։

— Ես մի ախպէր ունիմ, ասաւ, հրէ ձեր ըմարաթի պատի տակին ա, կանչեցէք գայ ըստի, ըժու կասիմ։ Դեին զըրգեցին՝ թըրաւորի տղէն եկաւ, «բարի, րիգոն» ասաւ ու նստեց։

— Հրէս իմ ախպէրը, ուշաբ բարերամնի, ասաւ, ձեր քիր Գունեա-Գեօղալը սրա բութէն ա, եկել ենք ձեր կուշտը, մուննաթ ենք անըմ, որ Գունեա-Գեօղալին

իմ ախպօրը տաք, իրար հետ պսակենք, գնան հասնեն իրանց մուրաղին։

Ուշաբնու ջիգրը շատ եկաւ էդ հըմարցակ խօսքերի վրա, հըմա ի՞նչ կարէին ասիլ, ի՞նչ զօռ ունէին, — Ղասաբ-օղլուցը ուոփ նման դպղում ին։ Մի վախտ դէս ու դէն գձեցին թէ՝ «մենք քիր չունենք». հըմա որ Ղասաբ-օղլին ասաւ թէ՝ «Գունեա-Գեօղալի անումն ու կուփասանը ալամ ըշխարին այդին ա», էն վախտն էլ թէ՝ «մարդի ենք տուել» ու վլան փստան։

— Ել դէս դէն չկայ, Ղասաբ-օղլին ասաւ, ես շատ լաւ գիտեմ, որ Գունեա-Գեօղալը ևս սհաթին ձեր ըմարաթինումն ա ու օխտը գուռը վրէն փակած ա. մի խօսքով թէ չէք տուել, ձեզ սաղ թողնուլ չեմ, էն ըմարաթինու գոներն էլ ջարդ ու փշուր կանեմ ու Գունեա-Գեօղալին կտանեմ։ — Ուշաբնու վրա պառը ջուր մազուց էս խօսքերի վրա. ճարնելուն կտրուեց, դարուլ կացան ու ասին։

— Դէ թող ախպէրը էլ հաց ուտի, կըքնենք վի կըկենանք ու էքսւց ըռաւող նշան կըդնենք։

Էքսի ըռաւողը թըրաւորի տղին տարան Գունեա-Գեօղալի կուշտը, մին մնու շանց տուին ու եփ տեհան, որ աղջիկն էլ տղին հըվանեց, խօսք տուին, որ մի քանի օրից եղը պսակեն։ Ըժու երկու նշանածին թողին իրար կշտի, իրանք օխտը ուշաբն էլ. Ղասաբ-օղլին էլ վիկացան զնացին ֆորսի. Հըմա օխտը օթախի գուռն էլ նրանց վրա դայիմ փակեցին։ Երկու նշանածը մնացին մենակ ու կցեցին քաղցրը զրիցը, իրար հետ խաղսը տալը, մի խօսքով զիգէք ըլի՛ թէ թագա նշանածնին ինչ կանեն։ Մին էլ թըրաւորի տղի աչքովը մի մենձ զըրգացաքար ընգաւ, որ օթախի մէջ տեղը վերընգած էր։

Սա եղ գառաւ Գունիա-Գեօդալին հարցրուց թէ. «ախր  
էս եքա զըդացաքարը էս թավուր օթախի միջին ի՞նչ ա  
շինըմ»:

—Ոչինչ, ասաւ Գունիա-Գեօդալը, դէ ով գիդի իմ  
ախտօրտանց բանը, վիր են կալել բերել ըստեղ վեգձել:  
Սարի թէ ուզեց շոտ տայ իր նշանածին, հըմա նա հըվա-  
տաց ոչ:

—Զէ, ասաւ, եղ ուրիշ բան կըլի, դու ինձ խարում  
ես, հալբախ ինձ սիրում շես, որ գրուստը շես առում.  
ու Էնդգամ եղանց, որ ասիլ տվուց. դէ ինչ կուզի ըլի  
աղջիկ էր, ըլի, շուտ խարուեց:

—Դէ որ ըթէնց ա, կառեմ, ասաւ, հըմա էդ քարին  
ձեռը չի տաս: Եդ քարի տակին, ասաւ, մի խորը ֆոր  
կայ. էդ ֆորի միջին էլ մի օխտը գլխանի ուշարի ջամ-  
սախ կայ՝ զիմա-զիմա կտորած. Հըմա, ասաւ, չունրի զրա  
ֆորին էն թաւոր անհանելի տեղ ա, որ ոչով չի կարում  
գդի: որ սպանի, իրան կտորեցին իմ ախտէրտինքն ու  
էդ ֆորի մէջը գձեցին, քարն էլ գրին, որ դուս չի զայ:  
Ընդուր որ, ասաւ, Ուշար-Ղամին էնթափոր բան ա, որ ֆո-  
րին ուրիշ տեղ ա պըհում ու չըէլը ֆորին սպանեն ոչ,  
իրան ինչզգամ կտորեն, էլ եդ կըսպանայ:

—Բա էդ ընչի խաթեր են կտորել զրան քու ախ-  
պէրտինքը. Թըգաւորի տղէն ասաւ:

—Էնդուր խաթեր. ասաւ Գունիա Գեօդալը, որ զա  
ինձ վրա զսմուն էր էլել, ուզէր փախցինի:

Թըգաւորի տղի սիրտը համփերեց ոչ, սա էլ քարին  
զէս բգտեց, զէն բգտեց, Գունիա-Գեօդալը ինչզգամ հա-  
րան-փրդան արաւ որ ձեռը չ'տայ ու վերջը վոշմանի  
չ'ելաւ. ում կասես: Էնդգամ արաւ, որ քարը մի քիչ  
ծռեց, լիով ֆորն ընդգաւ ու ընդեղից մի խուլ ձէն դուս

եկաւ թէ. «Աստած սիրով, ծարաւ եմ, զուր հասցրէք»:  
Թըգաւորի տղի մեղքն եկաւ. էն զդամ չըրչարուեց,  
որ քարը ֆորի բերնիցը զըաղ գձեց, սարի թէ ուզեց  
մի հանգով զուր հասցնի. մին էլ մի էնթավուր գոռգո-  
ռոց վերելաւ ֆորիցը, որ հլէի ամբի զուրոց ըլէր.—օխ-  
տը գլխանի ուշաբը ֆորիցը սըլացած դուս եկաւ: Գուս  
եկաւ, տարաւ բերեց մի լաւ թըթալօշ հասցրուց էս  
խեղճ թըգաւորի տղի ըրեսին ու Գունիա-Գեօդալին վի-  
կալաւ փախցրուց: Թըգաւորի տղէն լուօր ես զնացել թէ  
երէգ, իրանից գնաց ու մեռածի պէս ֆորի զրաղնիվիր  
փոռւեց:

Մըրիշ վախտից եղը ուշաբնին ու Ղասար-օղլին  
ֆորսատեղիցը եդ եկան, տուն մտան ի՞նչ տեհան, որ  
բանը բանիցը անց ա կացել: Ուշաբնին էն սըհաթը  
գլխի ընդգան, որ թըգաւորի տղի արած բանն ա: Ղա-  
սար-օղլին էլ որ տեհաւ իր ախպէրը նղաւած վերընդած  
ա հա, խելքը գլխիցն ընդգաւ ու կցեց վրէն սառը ջուր  
ածիլ, անդանուցը ձգձգիլ, բերանը փէտի կտոր կոխիլ,  
քներակնուն հուփ տալ, չըկըլ որ եդ բերուց: Ուշաբնու  
ատամնին զոնցնոտում ին, որ մի ձեռաց թիբա-թիբա  
անեն թգաւորի տղին, հըմա Ղասար-օղլու ահիցը ժագէ  
չին զալի: Եփ թըգաւորի տղին հարց ու փորձ արին՝  
ամեն բան իմացան, մնացին շուարած:

Ղասար-օղլին ասաւ — «Ի՞նչ էր շակիվում, ինձ քառ-  
սուն օր վագա տուէր, ես Ասծու անըմը կտամ ու  
ճամփու կընդնեմ. թէ քաւսուն օրումը ձեր քուերը բե-  
րի, խում շատ լաւ. թէ չըերի հա, հրէդ իմ ախպէրը  
ժող ձեր կտին դրաւ ըլի, լիով ինչ ուզըմ էր արէք:

—Դէ որ ըթէնց ա, ասին աշաբնին, արի էն ու-  
շարի տեղն ասենք: Եդ ուշաբըն ասին, ինին իր հըմար

զոգ երգիր ունի, հրէն է, փլան ըշխարքումը. նրա երգիրի շորակի կուռը ծովով պատած առ մէջը խոռոր մէրի ա, իրանից սավաճի՝ ոչով չի կարում ծովն անց կենայ:

Ղասաբ-օղլին գնալուց աղար իր ախտօրը քշրով քաշեց՝ հէնց պահ արվուց ուշաբնում. «տեհէք, ասաւ, շրէլ իմ գալլ լաւ պըհեցէք, չլիմ չիմանամ թէ քաշիցը մըրիչ պակսիլ ա, — վայ ձեր մեղքը.»

Ըժու Ասծու աներմը տվուց, թօփուղը ուսին դրաց ու զու էլաւ:

Ղասաբ-օղլին գնաց, գնաց, հըմա ինքն և չէր զիլլմ թէ նւր ա գնում:

Շատ էր գնացել թէ քիչ, էգ Աստոծ զիդի, մի որ էլ զլուխը քաշ արած, մտրի տունի ընգած իր ճամփին գնալիո՞ մի զըլմաղալի ձէն ընդաւ անգաճը. զլուխը ըրցրացրուց տեհաւ, որ իրանից խելի հետու, իրեք մարդ ճամփու մէջ տեղը կովում են, Նրանի էլ որ սրան տեհան հա, մին մնու ասին. «ախտէք, հրէ էի զարիք մարդին բերէք զըտամէք կարգենք, ոնց որ ասի՝ չիմըս էլ դարուլ կենանք»: Ղասաբ-օղլին մօդացաւ տեհաւ, որ դրանց կոխու մի խալըչի, մի ճիպտի ու մի թաղքէ գդակի վրա էր:

— Բարի օր, ասաւ Ղասաբ օղլին:

— Ասծու բարին, ասին էն իրեք մարդը:

— Էգ խի էք կովում, ասաւ:

— Ղարիք ախտէք, ասին, մինք էս իրեքս էլ հալալ ախտէրտինք ենք, միր հէրք հարուստ մարդ էր, մեռնելիս իր կարողութինը ընէնց վասիաթ արաւ, որ նրա թսպած փողը մի ախտօրս ըլի, մնացած դովլաթը մէկէլ ախտօրս, ու էս խալըչէն, ճիպտն ու քէշա քուլուղը, վրա իրեք տխտօրս, հմիկ մեր կոխու էս բաների վրա ա.

ևս ուղըմ եմ ըստոնք ինձ ըլին, փողն ու կարողութինը նրանց. նրանք էլ ուղում են, որ իրանց ըլի. հմի քի մուննաթվլմ ենք, որ մեր վճիռը տաս:

— Օխր սրանք լինչ բաներ են որ կովում էք, ասաւ ըրմացած Ղասաբ-օղլին:

— Սրանք էն բաներն են, ասին, որ էս քէշաքուլը լուզը որ գլխիդ գնես ու խալիս միջին կաղնես, ոչ ովքի տենուլ չի, հըմա դուն չիմնուն էլ կըտենուս. էդ խալըչի վրա էլ որ նստես աշքերդ խուփ անես ու էդ ճիպտովը տաս, հլէ լինչտեղ որ ասես՝ ձեռաց կթոշի ու ընդի վծկպայ:

Ղասաբ-օղլին մըրիչ միտք արաւ միտք ու թէ՝ «հատուէք տենում»: Զեռներուցը առաւ, քէշաքուլուղը դրաւց գլխին. մըրիչ հեռացաւ. տեհաւ որ դրուստ՝ իրան տենը չեն, Ըժու ձեռաց նստեց խալըչի վրա, աշքերը խուփ արաւ, ճիպտով տվուց ու թէ՝ «այ խալիչա, ասաւ, է վլան ծովի մէջ տեղի ըշխարքումը՝ վլան ուշարի ըմարաթի կողըին դուս դաս»:

Խալըչէն թռաւ. Մին էլ աշքը բաց արաւ, որ մի անվերի-վերի տեղ մի մենձ ըմարաթի կշտի վեր ա եկել: Խալըչէն ու ճիպտը տարաւ մի ծառի տակի պըհեց, քէշաքուլուղը դրուց ջերն ու կամաց կամաց գնաց ընդի տուն մտաւ, որ ուշարը զլուխը Դունեա-Գհօղալի ծնդան վրա դրած քնած ա, Դունեա-Գհօղալը որ Ղասաբ-օղլուն տեհաւ հա, համ շատ ուրախացաւ, համ շատ վախեց ու ձեռներով հըսկացրուց Ղասաբ-օղլուն, որ ուշարի վիկենալու վախտն ա, թնդ հեռանայ. Զունքի Ուշաբ-Ղամին օխտն օր իրար վրա բնում առ հմի հլէ օխտն օրը թլմամել էր:

Ղասաբ-օղլին քէշաքուլուղը դրուց զլիսին ու մնաց

տեղնուտեղը կաղնած. հըմա Դունեա-Գեօդալը հէնց իմացաւ թէ գուս զնաց. Մը խէլի վախտից եղը ուշաբը ճնկոտաց, դէս շուռ եկաւ, դէն շուռ եկաւ ու զարժնեց. հէտ աչքերը բաց արաւ թէ չէ, Դունեա-Գեօդալին ասաւ. «ըստեղ իսանի ոտն ա եկել, մըրթ-մըրթափոտ ա զալիս»:

—Ազբաթիլսէր, ասաւ, նվ կարայ քուերգիրը ոտը դնի, նվ կարայ էն ծովիրը անց կենայ, եա թէ չէ քու ահիցը նվ սիրտ կանի մոդ գայ, էկ ինչ ես ասըմ. Դրուստ ա, Դունեա-Գեօդալի խօսքերը ուշաբին մըրխելի դինջացրին, հըմա էլլըհէ գուս զնաց, որ մի դէս ու դէն աշըն ածի:

Ուշաբը գուս ելաւ թէ չէ, Ղասաբ-օղլին քէչաքուլ-լուգը գլխիցը վի կալաւ.—Դունեա-Գեօդալի սիրտը գող ընդաւ, ըրմացաւ թէ էս ինչ բան էր, «չուստ արա գուս ի՛, ասաւ, որ հրէս տուն կ'գայ»:

—Վախիլ մի, ինձ բան չի լիլ, ասաւ, ես եկել եմ որ քի վախցինեմ, հըմա ինչ որ ասեմ՝ կըտարիլ պտես. ուշաբը որ տուն գայ, ասաւ, հարցրու իմացի թէ նրգի ա ըլումն նրա Փորին:—Էս ասաւ ու ինքը գուս ելաւ:

Ուշաբը տուն եկաւ թէ չէ՝ Դունեա-Գեօդալը կցեց սուտ խունչիլ-մունչիկ անիլը, սուտ սէր շանց տալը, որ բալքամ ուշաբին խափի. Ըժու թէ՝ «Փորուդ տեղը ինձ շանց տառ»: «Ի՞նչ ես անըմ, ասաւ, ընչիդ ա պէտրը»:

—Ընդուր համար, որ գու ցերեկը սազ օրը զնում ես Փորսի, ես տանը մենակ նոտած մըլուզփում եմ, ըռանցի քի սիրտս բաց չի ըլում, հէտ Փորուդ տեղն էլ ա դիգենամ որ հետք նազամ, քու հաւէսը հանեմ—ասաւ ու սուտ լաց էլաւ: Ուշաբն էլ հէնց գիգէր թէ գրուստ

որ իրան սիրը ա Դունեա-Գեօդալը: «Հրէդ, ասաւ, իմ ֆորին մեր գուան տակին ա» ու ինքը գուս ելաւ՝ ֆորն զնաց: Նրա գնալուց եղը Ղասաբ-օղլին տուն մտաւ, որ իմանայ թէ բանն ինչումն ա: Նէ որ իմացաւ թէ ասել ա ֆորին գուան տակին ա, վլխի ընկաւ որ խափել ա:

—Բան չի կայ, ասաւ, զուն դասիդ դուլուզ արա, գուան տակը զուրի, զըրթարի, մթա թէ հըլվատացել ես, որ նրա ֆորին ըտի ա:—Ուշաբը ՚րիգունը տուն եկաւ տեհաւ, որ գուան տակը ուանդ-ուանդ ծաղկներով փնջած, ըղարին սիրուն շորեր փուած ու զըրթարած ա:

